Հրատարակւում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։ Առանձին համարը 7 կոպէկ։
Բաժանորդագրութիւնն ընդունւում է խմբագրատանը և «Կենդրոնական գրավաճառանոցում»։
Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Ардзаганкъ". կամ՝ Tiflis, Redaction „Ardzagang".

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիւրակի և տօն օրերից)։
Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով։
Յայտարարութիւնների համար վճարւում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԱՐՁԱԳԱՆՔ
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
(ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ)
Բաժանորդագրութիւնն ընդունւում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելեամինովեան փողոց. № 22, տուն Խանդամիրեանի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ԹԷ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԹԷ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ
ԿԷՍ ՏԱՐՈՒԱՆԸ 6 ՌՈՒԲԼԻ
Օտարաշխարհից պէտք է դիմել՝ Тифлисъ. Редакція „Ардзаганкъ", իսկ արտասահմանից՝ Tiflis. Redaction du journal armènien „Ardzagang"
Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

ԹԻՖԼԻԶԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ
Հինգշաբթի, յունվարի 16-ին
ԿԱՅԱՆԱԼՈՒ Է
Յայտնի երգչուհի
ԱԴԷԼ ԲՈՐԳԻ
ԿՈՆՑԷՐՏԸ
(«Կարմէն» օպերայի նոմերներից կազմած)
ՅՕԳՈՒՏ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Տոմսակները՝ 5, 4, 3, 2 ռ. 60 կոպէկ՝ 2, 1 ռ. 50 կոպէկ և 1 ռուբլի ծախվում են Բագրատ Միրիմանեանցի երաժշտական մագազինում և կօնցէրտի օրը Ժողովարանում։ (1—1)

ОТКРЫТА ПОДПИСКА на 1897 г.
НА ГАЗЕТУ
„ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ"
(ДВАДЦАТЫЙ ГОДЪ ИЗДАНІЯ).
ПРОГРАММА ГАЗЕТЫ: I. Правительственныя распоряженія. II. Телеграммы собственныхъ корреспондентовъ и „Россійскаго телеграфнаго агентства". III. Статьи по внутреннимъ вопросамъ. IV. Обозрѣніе иностранной пелитической жизни. V. Мѣстная хроника: засѣданія думы, обществъ и желѣзно-дорожныя новости. VI. Корреспонденціи. VII. Общая хроника—внутренняя и иностранная. VIII. Фельетонъ литературный, научный, повѣсти, разсказы и др. IX. Судебная хроника. X. Смѣсь. XI. Театръ и музыка и XII. Справочный отдѣлъ.
Въ январѣ 1897 года истекаетъ **десять лѣтъ** со времени перехода „Тифлисскаго Листка" къ настоящему издателю. Въ теченіе десяти лѣтъ „Тифлисскій Листокъ" съ каждымъ годомъ прогресировалъ: увеличенъ форматъ газеты, введены всѣ отдѣлы литературныхъ, политическихъ и общественныхъ газетъ, расширенъ отдѣлъ корреспонденцій и руководящихъ статей по мѣстнымъ вопросамъ, съ октября же мѣсяцы настоящаго года мы получаемъ **ежедневно спеціальныя телеграммы изъ Петербурга, редактируемыя И К. Василевскимъ („Буква").**
Оставаясь вѣрной своей задачѣ служить интересамъ Кавказа, редакція и впредъ будетъ заботиться о расширеніи какъ формата газеты, такъ и отдѣловъ ея, чтобы читатели „Тифлисскаго Листка" имѣли возможность быть въ курсѣ общественной жизни нашей окраины, всей Россіи и иностранныхъ государствъ.
ПОДПИСНАЯ ЦѢНА:

Городская.		Иногородная.	
На годъ	**5** р.	На годъ	**7** р.
„ 6 мѣсяцевъ . . .	**3** р.	„ 6 мѣсяцевъ . . .	**3** р. **50** к.
„ 1 „ . . . —	**75** к.	„ 1 „	**1** р. —

Подписка принимается **исключительно** въ конторѣ изданія: Тифлисъ, Головинскій проспектъ, домъ № 3, въ **Баку**—съ 15 декабря, въ „Справочной конторѣ" на Парапетѣ. въ **Батумѣ**—въ газетномъ агентствѣ М. Николадзе. (3—3)

ԹԻՖԼԻԶԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Չորեքշաբթի, յունվարի 15-ին
կներկայացուի
„ՍԱՄՍՈՆ ԵՒ ԴԱԼԻԼԱ"
Օպերա 3 գործ., երաժշտ. Սէն-Սանսի։
ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ.—Տ. Սիւնենբերգ. պ. պ. Լիւբին, Մակսակով, Ֆրանկովսկի, Դլաղոլեւ, Բէլսկի և Անդրէեվ.
Պարերի կարգադրիչ՝ պ. ԲԵԿԷՖԻ։
Երաժշտապետ՝ պ. ՏՐՈՒՖՖԻ։
ՍԿԻԶԲԸ Է 8 ԺԱՄԻՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ
Կասսան բաց է առաւօտեան 11 ժամից մինչև 2-ը և երեկոյեան 6-ից մինչև 11 ը։
ԱԶԴ.—Վաղը, հինգշաբթի, յունվարի 16-ին, «ՀՐԷՈՒՀԻ»։ Ուրբաթ, յունվ. 17-ին բենեֆիս Մ. Լիւբինի, կներկայացուի «Սամսոն և Դալիլա»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անգլօ-Ամերիկեան նոր դաշնակցութիւնը և մամուլը։
Վերջին դէպքերը Թիւրքիայում։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Թիֆլ. քաղաքագլխի օգնականի ընտրութիւնը։ Վանայ ռուսաց փոխ-հիւպատոսի ուղևորութիւնը։ Թիւրքահայ գաղթականների թիւը Կովկասում։ Թիֆլիզի երդուեալ և մասնաւոր հաւատարմատարների մէջ եղած հանգամանքները։ Հաղբատի վանահօր սպանման գործը։ Ռուսաց հիւպատոսութեան Իսպահանում։ Հայ գաղթականներ Վարնայում։ Նոր օրէնք հարբածների վերաբերեալ։ Հայկական ներկայացումն։ Գ. Ա. Մանթաշեանի նոր նաւթի շաղրուանը։ «Կարմէն» օպերայի ներկայացումն։ Օրուան խօսքերը։
ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՖԵԼԻԵՏՕՆ.—Լօնդօնի հիւանդանոցում։
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԳԼՕ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՈՐ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՄՈՒԼԸ

«Արձագանքի» անցեալ համարում Անգլօ-Ամերիկեան խաղաղութեան նոր դաշնակցութիւնը մենք անուանեցինք լինելութեան դարու ամենամեծ յաղթանակը, ամենամեծ գործը։ Եւ մենք չենք սխալուած՝ դէթ եւրոպական տեսակէտից.—այսօրուան ստացուած անգլիական „Daily Chronicle" լրագրի վերջին համարում այդ առթիւ կարդում ենք հետևեալ նշանաւոր յայտարարութիւնը.

«Այսօր մենք յայտարարում ենք աշխարհին լինելութեան դարու ամենամեծ գործի մասին։ Ամբողջ աշխարհը կըհամաձայնի, թէ միջազգային վէճերի արիւնահեղ վճիռները միջնորդ դատարանի փոխարինելը մտքի ամենամեծ յաղթանակը կլինէր։ Մտքի այդ յաղթանակը երբ և իցէ պիտի հասնի և դրան մերձենալու առաջին քայլն է Անգլիայի և Միացեալ-Նահանգների միջև ստորագրուած դաշնագիրը, որով նրանց մէջ ծագած բոլոր թիւրիմացութիւնները պիտի վճռուին միջնորդ դատարանի միջոցով»։

„Daily News" լրագիրը նոյն այդ առթիւ ասում է.

«Միջազգային հաշտարար միջնորդ դատարանը յաւակնութիւն չունի անպայման ոչնչացնել պատերազմը աշխարհից։ Նրա սահմանուելով միայն պահանջ է արտայայտվում, որ վիճող կողմերը ուժի դիմելուց առաջ գործ դնեն քաղաքակրթութեան բոլոր խաղաղ միջոցները իրանց վէճը վճռելու համար։ Եւ այդ բանի մէջ է Անգլօ-Ամերիկեան նոր դաշնագրի գլխաւոր նշանակութիւնը։ Սակայն ինքն ըստ ինքեան արդէն կարևոր է այն, որ այսուհետև երկու պետութեանց մէջ ծագած ամեն մի անհամաձայնութիւն պիտի ենթարկուի նախապէս դատարանական սառնաբուն և կրիտիկական քննութեան, պիտի կշռադատուին երկու կողմերի պատճառաբանութիւնները և պաշտպանութիւն նրանց շահերի և այդպիսով պիտի արգելուին շտապով վճիռները, որոնք դժբաղդութիւն են բերում ամբողջ ազգի գլխին»։

Ինչպէս տեսնում է ընթերցողը, „Daily News" լրագիրն աւելի մեղմ աչքով է նայում կայացած դաշնագրութեան վրայ, քան „Daily Chronicle"-ը, սակայն դրանով ամենևին չպէտք է թուլանայ մեծ գործի նշանակութիւնը։ Իբրև ապացոյց մեր խօսքերի՝ առաջ բերենք այստեղ Միացեալ-Նահանգների նախագահի սենատին ներկայացրած յայտագիրը, որի մէջ ասուած է.

«Ներկայ դաշնագիրը, թէև չի գոհացնել խաղաղութեան այն բարեկամներին, որոնք կըցանկանային անպայման, ամենուրեք գործ դրուի միջնորդ դատարան, բոլոր միջազգային հարցերը առանց պատերազմի վճռելու համար, սակայն ներկայ դաշնագիրը այդու աւելի մի նշանաւոր քայլ է դէպի առաջ քաղաքակրթութեան ճանապարհի վրայ, որովհետև վէճերի խաղաղական վճիռը սահմանում է իբրև բնական արդար ճանապարհ։ Կոպիտ միջոցների տեղ քաղաքակրթական միջոցներ սահմանելու այս փորձը պէտք է յաջողութիւն ունենայ և ի հարկէ նրա բարերար ազդեցութիւնը չպիտի երևայ միայն երկու շահագրգռուած ազգերի (Անգլիա, Ամերիկա) վրայ, այլ դրանց տուած օրինակը հետևողներ կըգտնէ և միւս ազգերի մէջ ու այդպիսով այդ օրինակը մի դարագլուխ կլինի քաղաքակրթութեան պատմութեան մէջ»։

Ռուս մամուլի օրգաններից այդ երևելի դէպքի մասին մինչև այժմ խօսում է միայն «Ռուսսկիյա Վեդօմոստի», որի կարծիքով՝

«Ներկայումս Մեծն-Բրիտանիան և Ամերիկայի Միացեալ-Նահանգները քաղաքակրթեալ աշխարհին մեծ օրինակ տուին մարդասիրաբար ձգտելով որ քաղաքակրթեալ ազգերի մէջ ընդունուին խելացի միջոցներ զանազան փոխադարձ վէճեր վճռելու համար։ Այդ օրինակը չէ կարող քաջալերիչ ազդեցութիւն չունել քաղաքակրթութեան բոլոր բարեկամների վրայ, որոնք անշահախնդիր, անընդհատ ջանքերով խաղաղութեան պրօպագանդան արդէն քաղաքական և դիպլօմատիկական աշխարհում գործնական յաղթանակ է ստանում»։

ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

ՄԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՅԻՇԱՏԱԿԱԳԻՐ

Փարիզի „Daily News"-ի թղթակիցը հաղորդում է հետևեալը.

«Ֆրանկօ-հայկական ընկերութիւնը, որի յանձնախմբի մէջ կան սենատորներ, երեսփոխաններ և զանազան ակադեմիաների անդամներ, մի յիշատակագիր է մատուցել երեսփոխանական ժողովին, սենատին և կառավարութեան՝ օսմանեան կայսրութեան մէջ քրիստոնեաների գոյքն ու կեանքը ապահովելու համար։ Ընկերութիւնը փափաքում է ուշադրութիւն հրաւիրել այն վերջին իրողութիւններին, որոնք ապացուցանում են, թէ կեղծ են սուլթանի արտայայտած բարեացակամութիւնները։ Յիշատակագիրն արձանագրում է թուրքերի մի կարգ գործեր օրստօրէն դեսպանների արած ազդարարութիւններից յետ, օրինակ՝ Ակնի և Եփրէկի կոտորածները։ Յիշում է թէ հայ կանանց առևանգումները գերեվաճառութեան շուկաներում կանանց ծախելուց աւելի յաճախադէպ են։ Լուրջ երաշխաւորութիւններ պէտք է լինին ապահովելու կանանց և աղջկանց եղեռնական անպատուութեան դէմ։ Պէտք է դադրեցուի իգական սեռի վաճառումն Պարսկաստանում։ Հասած է ժամանակը, երբ պէտք է Եւրոպան իրօք մի բան անէ նոր և անխուսափելի աղէտներից առաջ»։

Գ. ԳԼԱԴՍՏՈՆԻ ՆԱՄԱԿԸ ՍՈՒԼԹԱՆԻ ՍԻՍՏԵՄԻ ՄԱՍԻՆ

Առաջ ենք բերում այն նամակի պատճէնը, որ պ. Գլադստոնը դեկ. 30-ին գրել է դօկ. Սիմենսին.—

Ի պատասխան ձեր նամակին պէտք է ասեմ, թէ անհուն ուրախութիւն է պատճառել ինձ Իտալիայի և Հաբեշստանի միջև վերահաստատուած խաղաղութիւնը, և այդ բանը նկատում եմ իբրև մի դէպք, որ վերին աստիճանի պատիւ է բերում իտալական կառավարութեան խոհեմութեան և իմաստութեան։ Գալով արևելքի խնդիրներին, կարող եմ ասել, թէ սուլթանի ընթացքը բացատրելու միակ ենթադրութիւնն այն է, որ նա մի անգամ սկսելով իւր ժպրհութեամբ և ստութեամբ դիմակուած անգթութիւնների սիստեմը՝ հաճոյք է գտնում նրան շարունակելով։

Հաստատապէս համոզուել եմ, որ հեռու չէ նրա կործանման վայրկեանը. նրա սիստեմը փութացնում է այդ վայրկեանը։

Ձերդ անկեղծաբար
Ուիլեամ Ի. Գլադստոն։

ԱՒՍՏՐԻԱՅԻ ՆՇԱՆԱԿԱԾ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ

«Daily News»-ին հաղորդվում է, որ Աւստրիան մի պատերազմական նաւ է ուղարկել Ռոդոս՝ քննելու այն հայերի խնդիրը, որոնք «Լլոյդ» ընկերութեան շոգենաւով այստեղ ցամաք հանուելով, թուրք իշխանութեան յանձնուեցան և սպանուեցան։

ԴԵՍՊԱՆՆԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒՄ ԵՆ ՀԱՄԱՁԱՅՆԵԼՈՒ, ՏԱԳՆԱՊ ԵԼԴԻԶ-ՔԵՕՇԿՈՒՄ

„Daily News"-ի Փարիզի թղթակիցը հաղորդում է հետևեալը

Թւում է թէ Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարը և նրա Կ. Պոլսի դեսպանը խիստ փափաքում են պաշտպանելու դեսպանների մէջ կայանալիք համաձայնութիւնը։ Պոլսից եկած նամակներն այժմ աւելի յուսադրական են քան երբ և իցէ։

Յիշվում է մի գեղեցիկ սրամիտ խօսք, որ պ. Նելիդովն ասել է. Պ. Նելիդովը յունական դեսպանի հետ ունեցած իւր խօսակցութեանց միջոցին ասել է. «Այո, մենք համաձայնած ենք համաձայնելու»։

Սուլթանի վրայ ճնշելս ճնշում պիտի բանեցնուի, եթէ նա մերժէ պետութիւնների առաջարկը։ Որչափ որ կարող ենք հասկանալ՝ Եւրոպայի նոր ծրագիրն է՝ «Թիւրքիան գրաւի դնել», ինչպէս ասել է «Daily News»-ը։ Պ. Հանոտօն անձամբ աւելի քան երբէք յարում է այն քաղաքականութեան, որ պէտք է 40 միլիօն ֆրանկ ստեռլինգ մի փոխառութիւն անել Թիւրքիայի համար եւրոպական երաշխաւորութեամբ։ Սա նշանակում է եւրոպական կօնտրօլ։

Ինչ որ վերաբերվում է այն հարցին, թէ սուլթանը կ'ընդունի՞ մի այդպիսի կօնտրօլ, թէ ոչ, սրան՝ Ելդըզ-Քէօշկը ճանաչող ամեն ոք կը պատասխանէ «ոչ»։ Սուլթանն անմիջապէս «ոչ» ասելու չէ։ Որպէս ասում է պ. Կլեմանսօն՝ սուլթանը երբէք «ոչ» չէ ասում։ Նա պիտի ջանայ ժամանակ շահել՝ պետութիւնների միջև նախանձ գրգռել։ Դեսպանները գիտեն այս բանը։

Եղդզի պաշտօնեաները, որոնց ջանքերը դեսպանների խորհրդակցութիւնները լրտեսելու յաջողութիւն չունեցան, առաջին անգամ դեսպանների որոշումների լուրը Մունիր բէյի հեռագրից ստացան։ Փարիզի թուրքական դեսպանը տեղեկագրում է իւր պ. Հանոտոյի հետ ունեցած տեսակցութիւնը։ Նա այդ տեսակցութեան միջոցին սկսել էր պ. Հանոտոյին բացատրել թուրքական բարենորոգումների սովորական գեղեցիկ ծրագիրը և սկսել յիշելու սուլթանի մտադրութիւնները ապագայի համար—շատ մաքուր մտադրութիւններ—երբ պ. Հանոտօն կանգնեցրեց նրան դիտողութիւն անելով, թէ աւելորդ է շարունակել խօսակցութիւնը, քանի որ ամեն կէտի վրայ և առանց վերապահումի կատարեալ համաձայնութիւն է գոյացել պետութիւնների միջև, և թէ դեսպանները ի մօտոյ Բ. Դուռը պիտի յայտնեն իրանց որոշումները և ապա ելաւ. «և ես հասկացայ», ասում է թուրք դեսպանը, «որ իմ ունկնդրութիւնս վերջացել էր»։ Այս հեռագրի վրայ սուլթանը իւր աջ ձեռք համարուած անարգ Իզէդ բէյին ուղարկում է պ. Կամբօնի մօտ։ Ֆրանսիայի դեսպանը լսում էր այդ պաշտօնեային մինչ նա մի պանծալի ատուցիկ եղանակով գովում էր սուլթանի մեծանձնութիւնը։ Պ. Կամբօնը՝ երբ իւր խօսելու կարգն եկաւ, ասաց. «Իզէդ բէյ, դուք իրօք մի ճարպիկ մարդ էք։ Դուք կատարեցիք մի գործ՝ որ Եւրոպայի բոլոր պետական մարդիկ՝ կէս դարից աւելի աշխատեցան կատարել, բայց չկարողացան, այն է առաջ բերել պետութիւնների կատարեալ համաձայնութիւնը արևելեան հարցի մասին։ Այդչափ միայն կամեցայ ասել ձեզ»։

ԱՆՄԻՋԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Ի պատասխան հայկական նպաստամատոյց յանձնախմբի խնդրին լօրդ Սօլզբերին ուղարկել է նրանց այսօր Ֆիլիպ-Կեռիի հետևեալ տեղեկագիրը Դիարբէքիրի մասին։

«Կ. Պոլիս, 30 դեկտ. 1896

«Իմ Լօրդ— Պատիւ ունիմ հաղորդելու ձեր լօրդութեան, թէ մի նամակ եմ ստացել պ. Ուիտալից, որի մէջ յայտնում է, թէ իւր լսելով Դիարբէքիրում կան 30,000 անձինք, որոնց եթէ օգնութիւն չտրուի, սովամահ պիտի լինին։ Նա աղերսապէս դիմումն է անում, որ նոր դրամ ուղարկուի և բաշխուի Դիարբէքիրի, Մերդինի և Սղերդի կարօտեալներին։ Ես կարող եմ հաստատել պ. Ուիտալի այս խօսքերը և աւելացնել թէ նա այս լուրը հաղորդել է ինձ նորին վեհափառութեան Դիարբէքիրի փոխ-հիւպատոսի տեղեկագրի վրայ հիմնուելով, որ ի պատասխան իմ հարցումիս հեռագրեց ինձ, թէ այժմ Դիարբէքիրում կայ 6000 ֆունտ ստեռլինգի պէտք, Սղերդում 3000-ի և Մերդինում 2200-ի, այսինքն ամբողջը 11,200 ֆունտ ստեռլինգ՝ կարօտեալներին մահից ազատելու»։

5000 ՖՈՒՆՏ ՍՏԵՐԼԻՆԳԻ ՕԳՆՈՒԹԻՒՆ

Ուեստմինստրի դուքսը յունվար 7-ին հայկական նպաստամատոյց յանձնախմբի գանձանակից 5000 ֆունտ ստեռլինգ յանձնեց արտաքին գործերի պաշտօնատունը՝ Թիւրքիայի կարօտեալներին բաշխելու համար։ Այս երկրորդ գումարն է, որ նոր տարուայ առթիւ տրուած ընծաներից առնելով ուղարկվում է Թիւրքիայի հայ կարօտեալներին։

ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

„Daily News"-ի Կ. Պոլսի թղթակիցն նոյն քաղաքից գրում է մի երկայն նամակ՝ որից քաղում ենք հետևեալը.

«Դեսպանները դեռ շարունակում են ունենալ լուրջ ժողովներ, և ամեն բան բոլորովին գաղտնի պահել։ Իրանց խորհրդակցութիւնների մասին ոչ մի ամենափոքր բան չեն յայտնում։ Ոչինչ դեռ չէ իմացուել բուն միջոցների դիմելու որ և է ծրագրի մասին։ Անտարակոյս ամեն ոք բնական է համարում, որ մի այդպիսի բան գաղտնի պահուի մինչև Սև ծովի նաւահանգիստների սառոյցը հալուի։ Ինչ-որ դեսպաններից յայտնվում է, այն է, թէ նրանք ձեռնարկել են մշակելու բարենորոգումների մի յանդուգն ծրագիր....։

Այստեղ դիւանագիտական շրջանակներում ընդհանրապէս խօսվում է, թէ վերջին երեք վեզիրները արձակուեցան այն պատճառով, որ մերժեցին վաւերացնել ընդհանուր կոտորածի ծրագիրը։

Ինչ-որ ճշմարիտ է համարվում Ձեվադի, Քիւչիկ Սայիդի և Քեամիլ փաշաների վերաբերմամբ, մասամբ ճշմարիտ է համարվում նաև այժմեան մեծ եպարքոսի նկատմամբ։ Նա իւր հրաժարականը տուեց այն օրը, երբ Կ. Պոլսի կոտորածն ըսկսուեց, սակայն իրան հրամայուեցաւ, որ իւր պաշտօնի վրայ մնայ։ Եղդզի այն կամարիլյան, որ այսպէս իշխում է մեծ եպարքոսների և սօֆթաների պարագլուխների վրայ՝ ոչմիայն անխիղճ է, այլ վերին աստիճանի յանդուգն և յախուռն։

Այս յախուռն ընթացքը մեծաւ մասամբ վերագրելու է նրանց տգիտութեան...

Այս տգիտութեան և յանդգնութեան վրայ աւելացրէք անցեալ երկու տարուան փորձառութիւնը, երբ նրանք անպատիժ գործեցին ամեն չարիք, այն ժամանակ դիւրին է հասկանալ թէ ինչեր տեղի պիտի ունենան, երբ դարձեալ միայն մի պարզ ծրագիր ներկայացուի Թիւրքիային»։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊՂՏՈՐ ԱՂԲԻՒՐՆԵՐ

Յայտնի է թէ ինչ զզուանք պատճառեց քաղաքակրթեալ աշխարհին այն հալածանքը, որ գերմանական կառավարութիւնը բարձրացրեց տաճկաստանցի հայ փախստական պրօֆեսոր Թումայեանի դէմ, որ մի քա-

Նէ ամիս սրանից առաջ գնացել էր Գերմանիա հայկական խնդրի մասին մի քանի դասախօսութիւններ կարդալու նպատակով. պրոֆեսոր Թումայեանին արտաքսեցին Գերմանիայի սահմաններից։ Այժմ գերմանական այն մամուլը, որի թերթերը վերջին ժամանակ զատուեցին իբրև չարամիտներ, աշխատում է ստուեր ձգել Թումայեանի անուան վրայ, կոչելով նրան «գլէնֆոմսկէր»։ «Polit. Corres.» հաղորդում է, որ իբր թէ ինքը տեղեկութիւններ է ստացել որ Թումայեանը շարունակում է յաջողութեամբ դրամներ ժողովել յանուն հայ կարօտեալների։ Զաքսենիայում և թէ այլ քաղաքներում նրա երգերները Մարդաւանում մի ագարակ են գնել որ արժէ 3000 ֆունտ ստերլինգ ! (մօտ 30 հազար ռուբլի)։ Այս փաստի ճշտութիւնը հաստատում է զուիցերացի մի ամերիկացի, որ զանվում է Կ. Պօլսոյ գերմանական դեսպանութեան հովանաւորութեան տակ. պ. Բենդաու-Լանց անունով մի անձն, որ մեծ առևտրական յարաբերութիւններ ունի Թիֆլիսի հետ։ Թումայեանը նոյնպէս գրել է բելգիական մի գործարանատիրոջ որ նա իր գործարանի թելերը սկզբնական գնով զիջանէ յօգուտ հայկական կոմիտէի, և ահա Թումայեանին մերձաւոր անձինք մեծ յաջողութեամբ այդ թելերով առևտուր են անում»։

Մենք աւելորդ չենք վիճում նրա դէմ թէ հայ տառապեալների անունը հայատեացներ եղել են և դեռ կան. բայց նկատել կլինում «Polit. Corres.»-ի աղբիւրների պլոտորութիւնը հաւանական է, որովհետև նախ պրոֆեսոր Թումայեանը իր բոլոր անցեալի մէջ անարատ է, երկրորդ՝ Մարդաւանում 30 հազար ռուբլիանոց ագարակը նոյնպէս անհաւանական է, որպէս և Մարդաւանում տիրող «խաղաղութիւնը», երրորդ՝ թելի առևտուրն ինչ յարաբերութիւն կարող է ունենալ զանազան կոմիտէների հետ։ Հաւանական է որ գերմանական-ռուսական առևտրական հրանք գրգռում է, տեսնելով որ Բելգիական ապրանքները վաճառվում են Փոքր-Ասիայում, մինչ դեռ Կ. Պօլսոյ ամբողջ շուկան տրուած է գերմանացիներին, որովհետև նրանց դեսպանութիւնը «չէզոքութիւն» պահպանէ, նրանց թերթերը տաճիկների ապիրատութիւնները գովաբանում և հրէայ լրտեսների միջոցով հայոց պատրիարքի և հայերի վրայ ստուերներ ձգեն։

—

ԿՈՄՍ ԲԵՆԵԴԵՏՏԻ. ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑԸ

Արևելեան կնճռոտ խնդիրները լաւ ուսումնասիրելուց յետոյ այդ հմտագէտ դիւանագէտը զօրեղագոյն կերպով ապացուցանում է և քաղաքական դիւանագիտութեան անկարողութիւնը. Կ. Պօլսում դիւանագիտութիւնը—ասում է նա—խաբուել է, կարողացել է կորզել սուլթանից ամեն տեսակ ֆիրմաններ բայց դրանք բոլորն էլ մնացել են մեռեալ տառ։ Բոլոր դիւանագէտները, առանց բացառութեան, սպառել են իրանց բոլոր ուժերը, հաւատն ու արիութիւնը սուլթանի երբեմն երբեմն յայտարարած բարի ցանկութեանց և նրա անիրագործելի անզօրութեան մէջ։

Արդ, աւելի քան հաւանական է, ասում է կոմսը, որ այժմեան միջամտութիւնը նոյնպէս կմնայ միանգամայն անհետևանք։ Ի՞նչ պէտք է անել այն ժամանակ։ Հարցնողի կարծիքով, լաւ կլինէր, որ երկու պետութիւններ զօրքով գրաւէին Տաճկաստանի երկու ծայրերը։ Խոստովանելով հանդերձ որ կոմս Բենեդետտիի բնադատութիւնը դիւանագիտութեան անցեալ ջանքերի վերաբերմամբ պարզ է և ճիշդ, պէտք է նկատել, որ արևելեան հարցի նրա բացատրած վճիռը միանգամայն անորոշ ու տեսական է թւում։

—

ՊԱՌԱԿՏՈՒՄ ՍՈՒԼԹԱՆԻ ԵՒ ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՄԷՋ

Կ. Պօլսից «Նովոստիին» ի միջի այլոց գրում են.

«Հնայելով բոլոր այն զրոյցներին, որով որպէս թէ Ռուսիան շուտով պէտք է գրաւէ Բոսֆորի ամրութիւնները և Սև ծովի մէջ երեք ռազմական նաւահանգիստները, իսկ Անգլիան Իտալիայի օգնութեամբ, պէտք է գրաւէ Դարդանելի ամրութիւնը և երեք նաւահանգիստ Եգէյան ծովում, որպէսզի այդպիսով հարկադրեն սուլթանին շուտով ի կատար ածելու ռէֆորմները—միանգամայն ոչինչից չէ երևում, որ մի այդպիսի յատակագիծ շուտով հնարաւոր լինի իրագործել։ Թէ ինչ է թագցնում դեսպանների յամառութիւնը և թէ ինչ դուրս կգայ նրանց խորհրդակցութիւնից—առայժմ ոչ ոք չէ իմանում։ Բայց երևոյթներին նայելով, սուլթանն աւելի քան երբեւէ մտադիր է պաշտպանել իր անկախութիւնը և թոյլ չտալ պետութիւնների միջամտութիւնը։ Մինչև անգամ ասում են, որ նրա և դեսպանների միջև պառակտումն է ծագել։ Սակայն ասում են նոյնպէս որ դժգոհ մասնագէտների կուսակցութիւնը գնալով զօրանում է։ Այս օրերում տասը դեսպանները և գլխաւոր պալատականը պաշտպանվում էին զինուորական պահականների գնդերով։

ԷՐԶՐՈՒՄ, 18 դեկտ. 96 թ.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Գնապանոյ սովորմամբ և արքունի պատրիարք Օրմանեան հօր խնդրանաց հաճեցաւ սուլթանն իր գթով մը ընդհ. հայ բանտարկելոց ներում շնորհել, քաղաքիս և շրջակայ գաւառներէն հոս բերուած ամբողջ բանտարկեալները դեկտ. 12 ին շաբաթ երեկոյեան եկեղեցւոյ պարտէզը բերուեցան։

Կառավարութեան կողմանէ հանուեցաւ լուսաւորչին, հետզհետէ եկեղեցին տարուելով հանդիսաւորապէս երգեցողին և յետոյ ազատ թողուցին։ Կառավարութեան միջոցաւ գաւառացիներն ալ իրանց տեղերը ղրկուեցան։ Ի չարս ասոնց Կամբր վանուց վանահայր Կարին վարդապետ Եփրեմեան, պ. Եղիշէ Տուրսունեան, քաղաքիս բնիկ. արդ. դպրոցաց նախկին տեսուչ հիմա ալ Երզնկայի, և մի քանի եկեղեցի երիտասարդ ուսուցիչներ։ Վերջինին առաջարկուեցաւ տեղւոյս դպրոցաց ընդհ. տեսչութիւնը, չընդունեց և Երիզայի ուսուցչաց հետ մեկնեցաւ յերկիր։

Առաջնորդական տեղապահ արժ. Տէր Գրիգոր քհ. Արծնեան ֆիզիքապէս վնասուելով կլոտրէ նրա պաշտօնը ա. Ներսէս քհ. Վարդապետեանը։ Կըսպասուի նորընտիր առաջնորդի գալուստը, տեսնենք երբ կուգայ։ Թաղային երկսեռ ընդհ. դպրոցաց տեսուչ է պ. Կարապետ Տէր-Աւագեանը։ Թէև դասերը կանոնաւոր կը շարունակուին, բայց աղքատիկ և որբ մանուկներու դպրոցական պարագաները պակաս են։ Մասնաւոր մխիթարական է Ուսումնասիրաց ընկերութեան ուսումնական նոր տարեշրջանին (96 թ. սեպտ. 97 թ. յունիս) նորաբաց մանկապարտէզը, որ երկու երեք տարի է ի վեր հազիւ յաջողեցաւ բանալ, այն ալ այսպիսի տագնապալից տարւոյ մէջ. վարժուհին անդամ տարուան է պատրաստ ազն. տիկին Մատակեանի սանուհիներէն՝ օր. Ե. Գազանճեան։ Մանկապարտէզի մէջ երկսեռ մանկանց թիւը կը հասնի հարիւրի, բոլորն էլ խնամակալութեամբ, և շատ յաջողութեամբ կընթանայ։ Իգմիրեանի կտակին շնորհիւ այցելող վարժարանը կը շարունակէ ձևագործ, ձեռագիտութիւնը և կարը. այս վերջինին վարժուհի օր. Վ. Մոմճեանը կաշխատի հասցնել աշակերտուհիներ ձևի և կարի։ Աղքատութիւնը և թշուառութիւնը հայերուս մէջ շատ և շատ է, քաղաքիս ամբողջ առևտրականութիւնը թիւրքերի ձեռքն է անցած, աղքատը և հացապատիկը նրանց է մնացեր։ Չարաչար երկու անգամ երկրաշարժ և չարաշուք օրեր Կ. Պօլսոյ փոխել կե՜լ. սա ալ ռէֆորմ է։

Կ—ցի.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Յունվարի 13-ին քաղաքային խորհրդի նիստին կատարուեցաւ քաղաքագլխի օգնականի ընտրութիւնը։ Թեկնածուներով առաջարկուեցան Ա. Ա. Խմաննեան— 25 ձայնով, Ք. Վերմիշեանը 11, իշխ. Ա. Արղութեան-Երկայնաբազուկը—3 և Ե. Խոստալեանը—1 ձայնով։ Այս բոլոր անձինք, բացի պ. Խմաննեանից հրաժարուեցան քուէարկուելուց։ Գաղտնի քուէարկութեամբ պ. Խմաննեան ընտրուեցաւ քաղաքագլխի օգնական բազմութեամբ 30 ձայնի 18-ի դէմ։

* * *

Վանայ ռուսական փոխ-հիւպատոս Վ. Տ. Մայեվսկին կիրակէ, յունվարի 11-ին ուղևորուեցաւ ս. Էջմիածին, որտեղ մի օր մնալուց յետոյ, ճանապարհ կ'ընկնէ դէպի Վան։

* * *

«Թիֆլիսից հեռագրում են «Պրիազ. Կրայ» լրագրին. «Կովկասում այժմ գըտնվում են քառասուն հազար թիւրքահայ գաղթականներ,—22,000 Կարսի շրջանում, 13,000 Չերնոմորի նահանգում, իսկ մնացեալը Երևանում և նրա շրջակայքում։ Գաղթականներին մինչև գարուն պահելու համար հարկաւոր են հարիւր հազարներ։ Քաղցածութիւնից ու ցրտից մեռնողներ են եղել երեխաների մէջ։ Մոսկվայից և Հաշտարխանից օգնութեան պաշարներ ստացուեցան։

* * *

Այն հանգանակութիւնը յօգուտ տաճկահայոց, որոնք մեր կողմերն են ապաստանել, որ սկսեցին՝ համաձայն նոր կայացեալ Բարձրագոյն հրամանի, տեղւոյս երդուեալ եւ մասնաւոր հաւատարմատարները։ Այս օրերում, ինչպէս մենք տեղեկացանք, նրանց մէջ հանգանակած երբ հարիւր ռուբլի գումարը, համաձայն Կովկասի գլխաւոր վարչութեան կարգադրութեան, յանձնուեցաւ Թիֆլիսի ոստիկանապետին, որ պիտի ներկայացնէ պ. Նահանգապետի միջնորդութեամբ Կովկասի պ. կառավարչապետին։ Յիշեալ գումարը նուիրել են հետեւեալ երդուեալ հաւատարմատարները և փաստաբանները

Գ. պ. Դ. Եանդուլեան—25 ռ., Կ. Գլիւչչէվսկի—10 ռ., Նիկողայոս Քալանթարեանց—10 ռ., Գ. Դօլուխանեան—5 ռ., Բարսեղ Ճանշեան—15 ռ., Ն. Աթաբէգեան—10 ռ., Յ. Սպէնդիարեան—5 ռ., Ա. Ս Բէնիկէլ—5 ռ., Ս. Վ. Չէմէսով—10 ռ., Զ. Եա. Բօխլին—5 ռ., Պ. Ա. Օպօչինին—20 ռ., N. N.—25 ռ., Դրագնէվիչ—1 ռ., Վօցկոյ—3 ռ., Իշխ. Մաչաբէլի—2 ռ., Մ. Բէրբէրեան—3 ռ., Ս. Մելիք-Ադամեան—10 ռ., Ի. Տէր-Ստեփանեանց—10 ռ., Պետրոս Քալանթարեան—10 ռ., Բրունօ Օգուլէվիչ 10 ռ., Տխօրժէվսկի—5 ռ., Տուրկէվիչ—5 ռ., Ա. Լէբէգինսկի—3 ռ., Վ. Եղիազարեան—10 ռ., Քալանթար Քալանթարեան—10 ռ., Ա. Չկօնիա—1 ռ., Վ. Դօբրովսկի-Զարանէկ—1 ռ., Մունթեանց—3 ռ., Դանիէլեանց—10 ռ., Յ. Տէր Յովհաննիսեան—5 ռ., Ս Մելիք Նուբարեան—5 ռ., Վ. Պախօմով—5 ռ., Ռոստոմ Ղարաբէգեան—10 ռ., Կ. Ն. Բէյաէր—20 ռ., Ա. Բարխուդարեանց—3 ռ.։ Այլ և մի մասնաւոր անձն, որ չէ պատկանում փաստաբանների դասակարգին, այն է՝ պ. Արամ Բ. Ղօրղանեանը—10 ռ.։

* * *

Ամսոյս 13-ին, երկուշաբթի, Թիֆլիսի նահանգական դատարանում քննուեցաւ Հաղբատի վանքում 1895 թ. դեկտ. 27-ին կատարուած Յակոբ վարդապետ Նորատունկեանցի սպանութեան գործը։

Մեղադրուողներն էին Նիկող Այվազեան, Սարգիս Քալանթարեան և տ. Եղիազարեան, իսկ չորրդ. Սարգիս Տէր-Յովսէփեան Հովսեփեանցը փախած է, կալանաւորած չէ։ Վկաների ցուցմունքներն առնելուց և պաշտպաններին լսելուց յետոյ դատարանը կայացրեց է հետևեալ վճիռը. «Այվազեանը յանցաւոր է ճանաչվում սպանութեան և նախապէս դիտաւորուած յափշտակութեան մէջ և դատապարտւում է, զրկուելով բոլոր իրաւունքներից և կայքից, 12 ամեայ տաժանակիր աշխատանքի, իսկ Նիկոլա Եղիազարեանը և Ս. Քալանթարեանը անպարտ են ճանաչուած ատենի կողմից և արդարացրած»։

* * *

Ռուսաց տէրութիւնն Իսպահանում հիւպատոսութիւն է հաստատել, որի պահպանութեան համար յատկացրած է 9000 ռուբլի ոսկի։ Հիւպատոսարանի քարտուղարը պէտք է վարէ նաև դրագոմանի պաշտօնը։

* * *

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ ՎԱՌՆԱՅՈՒՄ

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Վառնա ծովեզերեայ գեղեցիկ մի քաղաք, 12 ժամ կըբաժնեն Պօլսէն, և իր մերձաւորութեան պատճառաւ էր որ հայերը Պօլսէն մարախի նման թափուեցան յիշեալ քաղաքը, ամեն օր շոգենաւերով կըհասնէին բազում հայեր, որոնց թիւը այժմ 18—20,000 հոգիի կըհասնի։

Այս գաղթականներին պատսպարելու համար, Պուլկար կառավարութեան որոշմամբ, տեղացի հայ և պուլկար երեւելի անձնաւորութիւններէ մի խառն յանձնաժողով կազմուեցաւ. յանձնախումբը իր ներքին ոյժերով և քաղաքէն հաւաքած մի քիչ նպաստներով մի առժամանակեայ ապրուստ կարողացաւ հայթայթել գաղթականներին։

Երկու ամսէ աւելի յանձնախումբը խնամեց գաղթականներին, իր ոյժեր այլեւս հատած էր և կարող չէր շարունակել իր բարենպատակ գործ, բայց ահա յանկարծ մի հեռագիր կը հասնի Վեստմինստրի դքսէն, ծանուցանելով մի առաքելուհիի գալը և միանգամայն իր հետ նպաստ կը բերէ գաղթականների օգտին։

Այդ առաքելուհին օրիորդ Ֆրայզըրըն էր (քանադացի մի օրիորդ, նախկին առաքելուհի Վանի, որ իր աչքերով տեսած է Վանի Յունիս 14-15-ի թրքական խժդժութիւնները), որ պահապան հրեշտակի մը նման ճիշդ ժամանակին կըհասնէր։

Գաղթականներն արդէն պատսպարուած էին քաղաքին տուները, վարձքով՝ անոնք որ կարողութիւն ունէին, իսկ անոնք՝ որ անկարող էին և պանդուխտ, Պուլկար կառավարութեան որոշմամբ հին հիւանդանոցի շէնքը և քաղաքէն դուրս քարանթինայի հարկերը գաղթականների տրամադրութեան ներքև դրուած էին։

Օրիորդին առաջին գործը եղաւ քըննիչներ և գրագիրներ կարգել ամսականով։ Վառնա հինգ շրջանակի բաժնուած է, իւրաքանչիւր շրջանակ իր քննիչն ունի, քննիչը ամեն տուն և ամեն տեղ կըմտնէ, կըքննէ և կըտեղեկագրէ օրիորդին, այս վերջինը իւրաքանչիւր գաղթականին պէտք եղած նպաստը իր ձեռքով իսկ կըբաժնէ. այսպէս հաց, մարդ գլուխ օրական կէս քիլօ հաշուելով ամսէր կուտայ, ամսէր՝ ածուխ, փայտի, ջերոցի, հագուստի, կօշիկի, վերմակի և տան վարձք ամեն անոնց, որոնք կըվարձեն իրենց տան տիրոջ,

---

ՖԵԼԻԵՏՕՆ

ԼՕՆԴՕՆԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑՈՒՄ

(Guy's Hospital)

—

Մի շաբաթ առաջ քրիստոնեայ աշխարհը, ըստ Նոր-տօմարի, կատարեց Փրկչի մարդեղութեան հրաշափառ տօնախմբութիւնը։

Թէև դարեր են անցեր (ու պիտի անցնին նոյնպէս յաւէտ) այն յաւերժական օրէն, երբ «Աստուածն մարդացաւ և՝ նոյն ապերախտ մարդկային ազգի փրկութեան համար անտրտունջ գամուեցաւ Գողգոթայի ձակատին՝ ըմպելով մինչև վերջին կաթիլ տառապանաց դառն բաժակը, սակայն Նորա տօնելի յիշատակը դեռ կայ ու կմնայ նոյնպէս փառաւոր, նոյնպէս պաշտելի, որպէս Ինքը փառաւորեալն Փրկիչ, բոլոր քրիստոնեայ ազգ ու ազգերի համար։

Այդ մեծ տօնի օր Լօնդօնը ևս—այդ համաշխարհային ծով ու բազմալեզու կենդրոնավայրը, որպէս մի քրիստոնեայ հզօր պետութեան մայրաքաղաք, իր բոլոր լուսաւորած պալատներով պճնուեր էր ինչպէս մի յաւերժահարս անտառի թագուհի կանաչազարդ անթառամ ոստերով ու թուփերով, վարդերով ու երփներանգ ծաղկոսներով և ոլորուն բիւրաւոր գոյնզգոյն լապտերների գոյնզգոյն բոցերով ու լոյսերով։ Ամեն ուրեք երգ ու ուրախութիւն, ամեն տեղ լոյսն ու հրավառութիւնը, ամեն անկիւն պարն ու խնդումը արդէն ընդհանրական էր՝ սկսեալ մեծածախ ու հզօրի և չքաւոր տնանկի համար։ Եւ նա արդարև այնքան կենդանի, այնքան ազնւորդ ու բնական կըթուէր, որ կարծես պատմական Բեթղեհէմի Աստուածածնեալ մսուրը այդ ժամերեց, այդ տեղն էր տեղափոխուեր անդրդամական ժամանակներից։ Բերելով իր հետ ինքն շրջապատող փառաբանիչ հրեշտակաց հոյլերը, երգասաց ռաբիները և արևելեան կողմից դէպի յարեմուտ մոգերին հրաւիրող «աստղն» ու միւս անթիւ պլպլացող աստղերը։ Այդ օրերին աւելի փայլ ու շքեղութիւն տալու համար բնութիւնն ևս, ըստ երևոյթին, իր բոլոր զօրութիւնն ի գործ էր դրել պարգևելու մշուշապատ Լօնդօնին հազուագիւտ պայծառ օր ու արև, խաղաղ ու աստղազարդ գիշերներ։

Այսպէս էր Լօնդօնի ընդհանուր տեսքը, այսպէս էր նաև այդ գիշեր մասնաւորապէս Guy's հիւանդանոցի ներսն ու փառաւոր շէնքի ներքին ու արտաքին տեսքը՝ իր սքանչելի հարուստ բաժանմունքներով, որոնք ամփոփուած են միևնոյն շէնքի մէջ և միևնոյն տանիքի տակ։

Guy's հիւանդանոցը՝ ընթերցող հասարակութեան, ըստ կարելւոյն ծանօթացնելու համար պէտք է ըսեմ, որ Լօնդօնի առաջնակարգ հիւանդանոցներից մէկն է և կրկնակի նորին վեհափառ թագուհու մասնաւոր խնամակալութիւնը։ Նորա յարատև գոյութեանը մի հաստատական աղբիւր, ի միջի այլոց կըկազմեն ու հասարակ դրամատէրները, վաճառականները և այլ դասին պատկանող անձինք։ Նորա ելևմուտը ևս նոյն, մի տարուան ընթացքում, երբեք հիւանդ այնտեղ ձրի ընդունել առ՝ մինչև երեք ամիս պայմանաժամով, եթէ նոյն տարեկան մնայն է 15 անգլիական ոսկի։

Հիւանդանոցի արտաքին հսկայ տեսքը շքեղ և փառաւոր է իր գեղարուեստական ճարտարապետութեամբ։ Նա հարուստ է մարմարեայ սիւների և արձանների, շատրւանազարդ աւազանների, ձեռակերտների ու քանդակների եւ սակներով, բուսապատ ու ծառախիտ պարտէզների բաժանմունքներով, որոնց մէջ ճեմելով էլ և էջ կ'առնեն ընտանի թռչնոց երամները։

Առաջին տեսքին, կարելի է ասել, կըգերադանցէ ներքին պատկերը։ Նա այնքան բարեզարդուած, բարեկարգուած և առողջապահական բոլոր պայմաններին յարմարեցրած է, որ դժուար թէ մի հմուտ աչք նորա ներքին կազմութեան վերաբերեալ մի պակասութիւն, կամ թերութիւն նկատէ։ Այնտեղ ցաւագարներ ու ցաւոց տառապեալները՝ բժշկական օգնութեանց և մայրական խնամոց հետ՝ կարող են իրենց ցաւոց սաստկութիւնը մասամբ մեղմացնել ու փարատել կամայ ու այն բ յաւէն, թռչնոց, ծաղկանց ու խորհրդաւոր նկարներին յառելով իրենց թառամած աչքերը, թաշուած դէմքը, որ աջ ու ձախ, գեղարուեստական ճաշակով, համով ու հոտով զարդարուած են յոյնաձև լուսամուտների ծոց կամ դարակների ու սեղանների վրայ։ Կամ պահ մի ալխաների ու գեղձանիկների վանդակներով հետաքրքրուել, որոնց մէջ փակուած սիրուն թռչնիկները, անդադար սուսուպուններով, կըգեղգեղեն իրենց զմայլեցուցիչ մեղեդին, հանգամանք մի, որ առ բնութիւնն ուղղած մի փառաբանական մաղթանք ճանաչես թէ մի գեղգեղեայ բարբ ու անէծք, արտայայտուած անհանգիստ թաչկոտումներով՝ դէպի այն ամեն անձինք, որոնք զրկեն փակել բնութիւնից արտօնուած ազատ ընթացքի ազատ կամքի ու էներգիի... Եւ կամ ընդ սոցին՝ կարդալ դէմ հանդէպ սիւների ու պատերի ծակոտին առանձին շրջանակներով փակցուած Աւետարանից քաղած ու ընտրած այնպիսի անթառամ փնջեր, որոնք՝ իրենց երկնային երանութեան համով ու բոյրով պահ մի կըթեթևացնեն մարդուս զգայարանքին տիրող «ցաւն ու փուշ» աշխարհի ունայն մտամութիւններն ու հոգսը և մահը գերազանցել կուտան՝ քան տառապեալի անցաւոր կեանքը. . .

Այդտեղ ըստ կարգին է նաև անկողինների դասաւորութիւնը, որոնց միմեանցից հեռաւորութիւնը՝ թէ աջ ու ձախ, թէ ձախակողմն ու սնարակողմ առնուազն 8-10 ոտք է։ Մաքրասիրութիւնն անկողինների ու զգեստների մասին անչափ խիստ է։ Նրանք՝ ի պահանջել հարկին՝ կըփոխուին ամեն մի ժամ։ Իսկ ըստ օրինի՝ ամեն մի շաբաթ անգամ։ Այսպէս ևս անօրինակ է մաքրասիրութիւնը յատակի ու միւս առարկաների վերաբերմամբ, որոնք ամեն առաւօտ կըլուացուին օճառով, կըսրբուին խոզանակներով և կըթրջհանուին ջնջոցներով։ Իւրաքանչիւր անկողին ունի իր առանձին երկփեղկ կամարաձև վարագոյրները, որ ի պահանջել հարկին կրնան բացուել ու ծածկուել։ Ունի իր առանձին արկղաձև, սեղանը, աղօթագրքերի մի պայուսակ՝ լի աղօթագրքերով, մի պարկ եւ օճառ, ջնջոցի և երեսսրբիչի համար։

Գալով կերակուրների և ըմպելիքների մասին, պէտք է խոստովանել նոյնպէս, որ նա ևս մեծ հոգացողութեամբ կըկատարուի։ Իւրաքանչիւր հիւանդին՝ իր առաջքի կարգի համաձայն՝ կըբաժանուի կաթ, կարկանդակի մի քանի տեսակներ, ձու, ձկնեղէնաց մի քանի տեսակ. վառեակի, զանազան թռչուններ և անասնոց միս, հանքային զովարար ջուր, կաթով թէյ, սուրճ։ Եւ այդ կըկատարուի օրուայ մէջ հինգ անգամ՝ առաւօտեան 6 ժամից սկսեալ մինչև 7-ը, հետեւեալ կարգաւորութեամբ։ — Ժամը 6 ին առաւօտեան, բժշկի կարգադրութեամբ՝ իւրաքանչիւր հիւանդի կըտրուի կամ զուտ կաթ, կամ կաթնապուր, կամ կաթով cacao (նարգիլակի տրմնին և իր պտուղ), կամ կաթով թէյ, որոնց հետ լինելու է կարագով օծած հացի կտորներ՝ տաշեղների նըման կտրատած։ Շատ անգամ ևս մի մի ձու, խիղով տապակած հացի կտորներ և ճարպի մասեր։

Ժամը 10-ին, առաւօտեան, մի մի մեծ բաժակ կաթ՝ կարագով օծուած հացի կտորներով։

Ժամի 12 ին, որ է ճաշ, իւրաքանչիւրին կըտրուի, կամ զուտ կաթ, սառուցով հանդերձ կամ կաթով ձուաձեղ կամ բրնձով կաթնապուր, կամ ձուկ, կամ վառեակի, հաւի, զանազան թըռչունների ու անասունների գեանախնձորով ու կանաչեղէնով տապակած միմի պնակ մսեղէն կերակուր։ Իսկ վերջին տեսակների հետ միշտ կըլինի կաթով ու շաքարաջրով պատրաստած բրնձէ փլաւ։

Ժամը 4-ին իրիկնապահին կաթով թէյ կամ կակաօ կաթով, որոնց հետ կըլինի կրկին կարագով օծած հաց և շատ անգամ ևս մի-մի ձու։

Եւ ժամը 7 ին, երեկոյեան որպէս ընթրիք կամ վերջնահաց, կըբաժանուի մի մի մեծ բաժակ կաթ և կամ մաս ջուր՝ վերասին կարագով օծած հացի կտորներով։ Ապա կըկատարուի երեկոյեան աղօթքը՝ երգեհոնի եղանակի տակ, քարոզ։

Իւրաքանչիւր բաժանմունք յանձնուած է մի գլխաւոր բժշկի, որ իր ձեռքի տակ ունի ուրիշ նորաւարտ բըժիշկներ և բժշկական ուսանողներ ու մի Sister (գթութեան քոյր)։

Եւ հասարակ բաժանմունքները կըբաժանուին գթութեան քոյրերի անունով, որոնց անունն արդէն փակցուած է խոշոր տառերով բաժանմունքի մուտքի ճակատին և նրա զանազան շարժական առարկաների վրայ։

Գթութեան քոյրերի իշխանութեան տակ կըգտնուին մի քանի ցերեկապահ և գիշերապահ օրիորդներ։ Ինչպէս Sister-ների, նոյնպէս և սրանց պահպանութեան ու ծառայութեան մէջ հիւանդը կըգտնէ մայրական կատարեալ խնամք ու հոգածութիւն, համբերատար ու խանդաղատ ոգի։ Ծառայող օրիորդները կէս ամիս մի անգամ փոփոխութեան մէջ են՝ մէկ բաժանմունքից դէպի մի ուրիշը։ Եւ կարծեօք այդ նըրա համար է, որպէսզի ապագային՝ հիւանդների ու նրանց միջև՝ բնաւ տեղի չունենայ մի անպատեհ անախորժ դէպք։

Ամեն առաւօտ և երեկոյ երբ կըլրանայ օրիորդների ծառայութեան միջոցը, նրանք պարտաւոր են հիւանդներին հարցնել թէ՝ օրուայ կամ գիշերուայ իրանց ծառայութեան ժամանակ զգացե՞ր են իրանցից որևէ դժգոհութիւն, չէ։ Ու առած պատասխանները թուանշանների կարգով կըներկայացնեն Նրան յատկացրած թղթեայ տախտակի վրայ, և իրանց ծառայութեան հաշուին հետ՝ կըներկայացնեն իրանց վերահսկող Sister-ին։ Իսկ վերջինը ևս կըներկայացնէ հիւանդանոցի ներքին կարգապահութեան վերահսկողին։ Եթէ մի որևէ հիւանդ, որ յայտնի է իր մահճի թուանշանով՝ պակաս թուանշան տայ, այդ ժամանակ Sister-ի միջոցաւ՝ հիւանդից կըհարցուի պատճառը։ Իրողութեան դէպքում օրիորդը (կամ օրիորդները) կ'ենթարկուին յանդիմանութեան, տուգանքի և թերևս արտաքսման անգամ։ Իսկ անիրաւ դէպքում՝ հիւանդը կըլսէ զգուշութեան և համբերութեան դասեր։

Ընդ սոյնին հիւանդանոցն ունի իր յատուկ քահանաները, որ միշտ կ'այցելեն հիւանդներին։ Իսկ շատ անգամ ևս երեկոյեան աղօթքներին ներկայ կըլինին և կըքարոզեն։

յեր մանրազննին քննութեան, օրիորդը իրենց պարտքերը ևս կվճարէ։

Քարանթինայի շէնքը պարսպած է քաղաքէն հեռու ըլլալուն, մի խիստ դըժուար է ձմեռ ատեն երթևեկութիւնը։ Հիւանդանոցը մի ընդարձակ շէնք է, աւելի քան հինգ սրահներով և բազմաթիւ սենեակներով, հոն իրարու վրայ խճողուած են ընտանիքներ, մանուկներ և տղամարդիկ։ Ամեն սենեակ և սրահ իր ջերոցն ունի, փայտն առատ է, շաբաթը երկու հեղ կ'ապանիսուի կառավարութեան կողմէ. ամեն որ իր հացը, հագուստ և պէտքերը կըստանայ։ Հիւանդանոցի ընդարձակ հրապարակին մէջ մի կեդրոնական խոհանոց շինուած է, ուր չորս հումհկու դատառացի վարպետ խոհարարներ կերակուր կըպատրաստեն։ Երեկոյին խիստ սրտաշարժ է տեսարանը. կոյս աղջիկներ, կիներ և երեխաներ մէկ-մէկ աման կամ պնակ ի ձեռին կ'երթան խոհանոց, ուր ամենքն ալ կըբաժնուի օրական կերակուրէն, երբ այս խեղճեր կըստանան իրենց կերակրոյ բաժինները, կըդիտեմ որ ամենին ալ դէմքը կը կ'ուրախանայ և բերաննին կըշարժի աղօթքի մը բերթմընջելով։ Շաբաթը երկու-երեք անգամ մսեղէն կերակուր կըստանան, իսկ մնացեալ օրեր կամ լուբիա, կամ ձիթապըտուղ, պանիր եայլն։

Օրիորդը տուն մը վարձած և հիւանդանոցի վերածած է գաղթականների օգտին համար, ուր կըպաշտօնավարեն Պոլսէն եկած կարող բժիշկներ ամսականով։

Բաց աւելէ Օրիորդը ատաղձագործութեան և երկաթագործութեան ըդըրաւկ գործարաններ հաստատած է, դարձեալ գաղթականների օգտին, հոն գոհացուցիչ օրականով Պոլսէն գաղթող վարպետներ կ'աշխատին։

Հիւանդանոցի շէնքին մէջ բացած է մի արհեստանոց, ուր կըպատրաստուին գաղթականներին տրուելիք հանդերձեղէնները. հոս ևս գաղթական կիներ և օրիորդներ ու տղամարդիկ կ'աշխատին գոհացուցիչ օրականներով։

Վերջապէս 25 երիտասարդներ Լօնդօն և Ալէքսանդրիա խրկուեցան օրիորդ Փրայըրի ծախքով։

Մինչև այս օրս դեռ ձիւն չէ եկած հոս, օդերը մեղմ են։

Երկու շաբաթուան մէջ երկու անգամ ներկայացուեցաւ հայերէն լեզուաւ «Սասնայ կոտորածը». մանրամանութիւնք յաջորդով։

Մի քանի օրէն բեմի վրայ կըհանեն «Ցայրասի հերոսներ կամ Ուլնիոյ յաղթանակը» անուն թատերգութիւնը։

Հայկ

2/14-ն յունուարի 1897
Վարնա։

* * *

Այն հարբած մարդիկը, որ գինովցած փողոց են դուրս գալիս, օրէնքով ենթարկվում են բըէշական պատասխանատուութեան։ Այդ մայրաքաղաքի լրագրները հաղորդում են, որ այդ հնացած օրէնքը, տեղութիւնը մտադիր է վերցնել. ռուսաց կայսրութեան նոր օրինագրքի մէջ հարբածներին հաշտարար դատաւորի մօտ կըքաշտան միայն այն դէպքում, եթէ սրանք զալմաղալ հանեն փողոցում կամ ինչպէս ընդունուած է ասել՝ «հասարակական հանգստութիւնը խանգարեն»։

* * *

Վաղը, հինգշաբթի, ժամ յը 16-ին. վրաց ազնուականաց թատրոնում հայ դրամատիկական խումբը մի ներկայացումն կըտայ ի նպաստ սցենարիուս պ. Ա. Սողղաբեանի, կըներկայացուին երեք նոր պիեսներ։

* * *

Անցեալ անգամ մենք հաղորդել էինք որ պ. Ա. Մանթաշեանի № 68 նաւթի հին շադրուանը (Բալաղանիխա կոչուած գետնում) սկսել է նորից խըփել։ Այժմ «Կասպին» տեղեկացնել է որ այդ շադրուանը օրական մօտ 500,000 փութ նաւթ է տալիս։

* * *

«ԿԱՐՄԷՆ» ՕՊԵՐԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Ճարաթ, յունվարի 13 ին, թատրոնում կայացաւ Ժօրժ Բիզէի «Կարմէն» օպերայի առաջին ներկայացումը։ Բիզէն պատկանում է ֆրանսիական նորագոյն երաժիշտների շարքին։ Նրա հեղինակութիւններից ամենայաջող օպերան է, որ հիանալի համարներ է պարունակում թէ երգեցողութեան և թէ օրկեստրի համար յօրինուած։ Այդ երաժշտութեան ընդհանուր բնաւորութիւնը՝ ընայական Վագնէրի ուժեղ ազդեցութեան, շատ թեթև և դիւրեկան է, բոլորովին համապատասխան գլխաւոր անձնաւորութեան—Կարմէնի բնաւորութեան։ Դա մի թեթևամիտ, coquette, բայց կրակոտ սպանիական գնչուհի է, որի նշանաբանը կարող է համարուիլ՝ օգտուիր կեանքի հաճոյքներից ինչքան կարող ես։ Նա իր գեղեցկութեամբ ու աշխուժով հասցնում է զինուորական Դօն-Խօզէին այն աստիճանի, որ նա ընկնում է Կարմէնի յետևից սար ու ձոր, թողնում իր ծառայութիւնը և միանում է մաքսանենգ անձանց հետ, որոնց մէջ Կարմէնը մեծ ազդեցութիւն ունի։ Բայց սիրուն կախարդուհու սիրտը փոփոխական է. մի քանի ժամանակից յետոյ արդէն հակուած է դէպի ցլամարտ (տօրէադօր) Էսկամիլիօն։ Բայց այդպէս հեշտութեամբ խաղալով այրերի սրտերի հետ, նա դառն կերպով տուժում է, զրկուելով կեանքից. Նախանձից կուրացած Դօն-Խօզէն սպանում է Կարմէնին կրկէսի դրան առաջ, որտեղ նա համբերութեամբ սպասում է իր հերոս Էսկամիլիոյի յաղթանակին մասնակից լինելու։ Օպերայի սիրուն երաժշտութիւնը չի պարտաստում լսողին մի այդպիսի տրագիքական լուծման և այդ պատճառով խորին ցաւակցութիւն է զարթեցնում Կարմէնի մահը։

Կարմէնի դերը, որ ի հարկէ գլխաւորն է և լսողի ամբողջ ուշադրութիւնն է գրաւում, պահանջում է վերին աստիճանի վայելչութիւն և երգի ու խաղի թեթևութիւն։ Նա բնութեան զաւակ է և ամեն ինչ կատարվում է նրա մէջ առանց երկար մտածմունքի։ Տ. Սինենբերգը չէր կարող այդ պայմաններին բաւականութիւն տալ, որովհետև նրա խաղը չափազանց դրամատիքական, մըտածուած է, նրա աշխոյժը—մի քիչ արուեստական, մի խօսքով նրա ամբողջ էութիւնն իրեն երգչուհու և դերասանուհու շատ ծանրաբարոյ էր Կարմէնի համար։ Բայց դրանով չենք ուզում տ. Սինենբերգի արժանաւորութիւններին իրեն արտիստի նսեմացնել, այլ կարծում ենք, որ նա այդ դերն ակամայ իր temperament-ին է յարմարեցրել և այդպիսով Կարմէնը երևան է գալիս բոլորովին ուրիշ տեսակ լուսաւորուած։

Միւս դերակատարների մասին մի այլ առիթով։

Օրկեստրը շատ գեղեցիկ նուագեց ուվերտիւրան և ընդհանրապէս շատ բաւարար կըլինէր, ինչպէս և երգեցիկ խմբերը, եթէ անդ-անդ չխոտորվուէր (расходиться) երգողների հետ, օրինակ՝ 2-րդ գործողութեան մէջ Կարմէնի պարի ժամանակ, եայլն։

Օր. Մ. Բ.

* * *

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԵՐ

Մխիթարական երևոյթ մ'է, որ կը տեսնուի այս պահուս ամենուրեք՝ կարօտ ու թշուառ ինկած հայուն նիւթապէս օգնելու խնամքը, ջանքը, յանուն քրիստոնէութեան, մարդասիրութեան։ Այո, յուղուած են աշխարհի բոլոր զգայնոտ, բարի ժողովուրդները, սրտերնին արդար ցասմամբ մը լեցուած, հոգիննին վրդոված, հարևանոր տաբիններ ի վեր տառապող, հեծող հաւատակից ազգի մը ենթարկուած ղարավերջի ահռելի դժբաղդութեանը, յորում հայերը հազարաւոր անմեղներու արիւնը հոսեցաւ՝ յարդ փոխարինող շօշափելի, նոյն իսկ մանուկներ հասնել չափ արդիւնք մը առաջ չբերելով, աւա՛ղ՝ ներկելով միմիայն հողերն ու ջրերը... Եւ անոնք, որ զոհ չգնացին, ունեցածներէն կողոպտուած, մէկ մասը՝ դեռ կըսպառէ, սիրելիներուն արիւնովը ոռոգուած վայրերուն մէջ՝ զորհողնելի համակրութեամբ, վայրկեանէ վայրկեան ճակատագրին ոյժը, կամ անողոք անօրէնութիւններուն.. Ու, միւս մասը հալածական, ցիրուցան ամեն կողմ, թափառական ու բարբարական, որոնց գէթ հիմակուհիմակ անօթի փորը կշտացնելու, մերկ մարմինը ծածկելու և յուսավառտակ, վշտակոծ գլուխը հանգչեցնելու նպատակով աչ հաղհաղէ հանգանակութիւններ կ'ըլլան, նպաստող հանդէսներ ու ներկայացումներ կըսարքուին։

Մեր բարեգործական ընկերութիւններն ալ տուող օգնութեամբ մը հա կամ, գոտեպնդուած, սկսած են ու կըշարունակեն անխոնջ ջանքով իրենց սահմանած գործը, կարօտող ազգակից գաղթականները խնամելով, սփոփելով։

Տարակոյս չկայ, որ ամեն չկնասուած հայ, ինչ դիրքի և վիճակի տէր ալ է ան, սիրտ ու զգացում ունի, չկրնար անտարբեր մնալ, չըզգածուելու կարողութեանը համեմատ նիւթական, բարոյական աջակցութիւնը ինոյնել վտարանդի եղբօրը, որ եկած իր դուռն է ինկած այսօր, գթութիւն կըհայցէ։

Այս անհուն ու բազմադիմի պէտքին առջև ինչ որ ալ բաժին հանենք մեր ունեցածէն ընականաբար բարիքէն ու գոհողութենէն աւելի՝ պարտականութիւն մ'է, որ պիտի կատարենք, սրտերնիս ու մտքերնիս հանգստացնելով։ Խօսքերնիս անոնց համար չէ, որոնք միայն անունով հայ, անձնական ամենափոքր շահերն իսկ ամեն բանէ նախապատիւ համարելով, բայց մը իսկ չեն տանիր՝ հեռաւելու համար իրենց ճշմարիտ պարտականութեան։ Ընդհակառակն, ամենքը խաբելով, ինքզինքնին աշխատելով, կեղծ ձևակերպութիւններով, ունեցածներնին դաղտագողի կըծածկեն դէպ իրենց սըրտած զորօրական նորահետքերու առջև է։

—

Հիմակ դանք այստեղ գտնուող մեր կարօտ գաղթական եղբարց, որոնք եթէ ոչ աւելի, գէթ երեք որաչ դասակարգերու կըբաժնուին, աւելորդ է ըսել՝ ամենին ալ, առանց բացառութեան նոյն նախկէս ամենատողորմելի կացութեան մը մէջ։

ա) Անոնք, որ իրենց գաղթած առաջին օրէն իսկ համակերպած են դիմել բարեգործականին, որոնք գաղթականաց էն գլխաւոր թիւը կըկազմեն։ Անոնց մէջ կան ընտանեաց տէր անձեր ալ, որոնց ամենուն պատսպարուելու տեղ ցոյց տրուած, հագուստներ բաժնուած, և ամեն օր մէկ անգամ, կէս օրի միջոցներուն ճաշ կըտրուի։ Փակագծի մէջ յիշենք, թէ օդերուն այսպէս լաւ երթալն ալ կարծես թշուառ գաղթականաց համար մասնաւոր նպաստ մ'է, որ կըշնորհէ իրենց մայր բնութիւնը։ Ճաշը կըբաշխանայ՝ խորաքանչիւր հոգւոյ մէկ փոնտ հացէ, և մէկ կանխաւոլ, առատ բաժին, բացի պահքի օրերէն, մսով անոնդարար կերակուրէ մը։ Հացին ամբողջը չատեր չկրնալով ուտել, բաժինէն աւելցած մասն կտորի մը հետ կըպահեն եղբ, և անով իրիկուան անօթութիւնուն՝ թէթև «ընթրիք» մը կ'ընեն։ Իսկ անոնք որ զօրաւոր ստամոքս, սուր ախորժակ ունին, և բաժիններնին ամբողջ կ'ուտեն, չգիտեմ իրիկուանները ինչպէս կ'անցնեն...։

Անտարակոյս, աւելի բարեխիղճ, նըպատակայարմար կարգադրութիւն մը բրած կ'ըլլայ ազգօգուտ ճաշարանը, եթէ՝ փոխանակ օրը մէկ անգամի և շատ առատ, չափաւոր՝ և օրն երկու ամգամի վերածէր։

բ.) Անոնք, բարեգործականէն խընամուիլ դաս, փողոցները, նոյն իսկ ուրիշ ազգերու եկեղեցիներուն դուռները նստած՝ անցորդներուն ձեռք կըկարկառեն, իրենց մայրենի լեզուով, կերկերուն ձայնով ողորմութիւն կըխնդրեն։ Անոնց մէջ, երբեմն, կըտեսնուին ֆիզիքական քիչ շատ ոյժերով օժտուած երիտասարդներ ալ։

Ինչու մուրան անոնք ուրիշ ազգերու առջև, երբ ազգ. Բարեգործականը իրենց ապրուստին պէտքերը փոքր ի շատէ կըհայթայթէ, կըհոգայ։ Անշուշտ պատրի չըներ այս ցաւալի երևոյթ։ Ամօթ է։ Ու պարզապէս իրենց ընձեռուած հոգածութիւնը չարաչար գործածել է, և մուրացկանութիւնն արհեստ ընել՝ անգիտակցութեամբ։

գ.) Վերջապէս անոնք, որ մասարապէս քիչ շատ զարգացած, ոչ թէ հպարտ, այլ՝ վեհանձն, չեն կրնար դիմել Բարեգործականին, այդ դիմումը փափուկ արժանապատուութեաննուն հետ չկրնալով դիւրաւ հաշտեցնել, իրենց համար բարոյական անկում, մահ նկատելով, որոց ամենն ալ ունեցած են իրենց փայլուն, բաղմաւոր անցեալը, ու մեծ թիւ մը չեն կազմեր անոնք, ընդհակառակը շատ փոքր։ Անոնց ներքին կացութեան դժնդակութիւնը սահման չունի, հեծեծանքնին ներսիդենին կըխեղդեն, ձայներնին դուրս չեն հաներ, և ակամայ, բռնազբօսիկ ժպիտը երեսնուն վրայ միշտ։

Գործ կըխնդրեն անոնք, և ոչ թէ ողորմութիւն։ Գործ՝—խղճի հանդարտութեամբ ու այժմ սանկ մը ապրել կարենալու, առանց ուրիշի մը վրայ բեռ, ծանրութիւն ըլլալու, միայն ապրելու համար, մինչև իրերուն որոշ հանգամանք մը ստանալը

Ցանցանք է անոնց Բարեգործական Ընկերութեան շրիմներին։ Ցանցանք է պատուաւոր աշխատութիւն մը փնտռելու հետամտութիւնն, քրտինքովին կտոր մը չոր հաց ճարելու ճիգերնին...

Ս. Մ. Ցոզիկեան։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

*** «Fortinghtly Review» ի յունվարի համարում հրատարակուած է տիկին Կոնստանս Սուտկլիֆի մի յօդուած, որ բաւականին տարօրինակ ապաւորութիւն է գործում ժամանակակից ընթերցողի վրայ։ «Միր Բօժի» հանդէսը՝ քաղուածքներ անելով այդ յօդուածից իմիջի այլոց ասում է.

«Թիւրքիան հաւանաբար, պատրաստում է ոչ սակաւ սիւրպրիզներ, մանաւանդ որ, ճիշտն ասած, մենք այդ երկիրը քիչ ենք ճանաչում, և բաւ մեծ մասն նայում ենք Թիւրքիայի վրայ երբ կիսաքաղաքակիրթ բարբարոսների և ֆանատիկոսների վրայ»։

Եթէ թիւրք ազգը այնքան հարիւր հազարաւոր անմեղ մարդկանց արիւնը խմցմարար թափելուց և երկիրը քարուքանդ անելուց յետոյ դեռ էլի «կէս քաղաքակիրթ» է կոչվում, ապա ուրեմն էլ ո՞վ է բոլորովին անքաղաքակիրթ բարբարոս և ֆանատիկոս ազգը։ Չէ որ մարդակեր ցեղերն էլ իրենց փորը կըշտանալուց յետոյ ի դուր տեղը չեն խլում մարդու կեանքը։

«Եւ դեռ բոլորովին չենք ճանաչում այդ ազգի միւս կողմերը։ Մենք բոլորովին չգիտենք թէ ինչ բան է թիւրքական արհեստագործութիւնը, թիւրքական բանուորութիւնը, և, ի հարկէ, խիստ մութ գաղափար ունինք թիւրք բանւորական կօրպօրացիաների մասին, մինչդեռ այդպիսիներ կան Կ. Պօլսում շատ վաղ ժամանակներից սկսած, և տիկին Սուտկլիֆը ենթադրում է որ դրանք նոյնիսկ մարգարէից հիմնուած լինին»։

Եւ ապա յօդուածագիրը զովում է դրանց ներքին սերտ միաբանութիւնը և իրարու ցոյց տուած պատրաստակամ օգնութիւնը և իւրաքանչիւր կօրպօրացիայի դրօշակի վրայ գնել է տալիս հետևեալ նշանաբանը՝ «Աշխատութիւն և արհեստը կազմում են լաւագոյն պաշտպանութիւն ընդդէմ չքաւորութեան»։

Նոյն իսկ այս միջոցին դէպքերից առաջ էլ թիւրք ժողովրդեան արհեստագործութեան և բանուորութեան մասին եկած սկսիլ այսպիսի ըդրուածք շատ խորթ պիտի թուէր ընթերցողին, որովհետև բաւ տաճիկները՝ իբրև արհեստաւոր, ծոյլ, անշնորհք և ձրիակեր յայտնի էին ամբողջ Թիւրքիայում։ Հենց իրանք զգալով իրենց այդ պակասութիւնները շատ անգամ փորձել են օգտութեալ արհեստագործութիւնից, բայց

Իսկ ինչ կըվերաբերի բժշկական ճիւղին ու իր պարագաներին՝ այսքանս միայն կարող եմ ըսել այդ առթիւ, որ նա օժտուած է այդ գիտութեան բազմակողմանի ճիւղերով ու բազմազան պարագաներով։ Բացի որոշեալ և հըրթապահ բժիշկներից՝ այդտեղ կ'այցելեն շաբաթը մի քանի անգամ փորձառու բժշկապետներ և աշակերտական դասերի ներկայութեամբ կըկատարեն իրենց զըննողութիւնը հիւանդների վերաբերմամբ, եայլն եայլն, որոնց ընդհանուր նկարագրութիւնն անշուշտ բարձր է իմ գըրչից։

Այդ օրը մեր բաժանմունքը ևս— Sister Stephens' Ward— ուր մօտ երկու ու կէս ամիս աւելի խնամակալուած էի պատուաւորման բարեկամներիս շնորհիւ, գեղազարդուած էր արտաքոյ կարգի ըշքեղութեամբ։ Դա կրծքի, փորի և քամոտող հիւանդների բաժինն էր։ Հիւանդանոցի տասնևութ բաժանմունքներից մէկը։ Նա իր մէջ կըպարունակէր 41 անկողին՝ փասաւորուած 4-րդ կարգերով, դէմ հանդէպ, կամ ընդհակառակ։ Նորա լայնքն ու երկայնքը՝ առաստաղի ու պատերի բարձրութիւնից՝ ցանցած էին սարդի ոստայնի թելերի նըման անթառամ կանաչ ոստերի ու թըփերի հիւսքերով և ծաղկափունջ ծանիրով։ Իսկ նոցա յարմարաւոր մասերից կախ արած էր առանձնակ զինուոր լապտերներ։

Եւ գիշերուայ այդ խորհրդաւոր պահուն, նոցա մոյթ ու մռայլ, խարխաշ ու կապոյտ, կանաչ ու կարմիր լուսացնծուղները, գիւթիչ տպաւորութեամբ, ոստոստիկ խաղերով կըցոլային՝ շըջապատող պճնազարդ առարկաների մի ջոլներով ու կըթրթռային իմիջի այլոց հիւանդաց անկողիններին շուրջն ու վըրան և կըշոյէին նոցա յոչնած ու դանատ դէմքերը. մի տարրի, որոնց համար թշուառութիւններով լի կեանքը այդ ժամերին՝ արդէն իր սև երեսն էր ցոյց տուած...։

Հանդէսների սկզբնաւորութիւնը տեղի ունեցաւ նոյն օրուայ ճաշից յետոյ ժամը 2-ին։ Այդ միջոցին յանկարծակի ներս խուժեց վայրենի աղաղակներով ու գոչումներով խարշկինների երկիւղաբեր տարազով ու դիմակներով մի երկսեռ խումբ, որանք զինավառեալ էին սրերով և բրերով ու կ'առաջնորդուէին թմբկահարութեամբ և փողով։ Եւ որովհետև խումբը պիտի այցելէր հիւանդանոցի բոլոր բաժինները՝ ուստի նա բաժանանցաւ կարճ ընթացքում կատարել մի քանի զաւեշտական թեթևակի պարեր և երգեր երգել։ Ապա մի փոքրիկ ծաղրածու ներկայացումից յետոյ սկսաւ ընդունիլ երկու պատրաստուած ճոխ սեղաններից «ստեանան» նշանը, այն է մի-մի բաժակ իր ցանկացած ըմպելիքներից ու մրգերից և շրջան աանելով հիւանդանոցի չորս կողմը դուրս գնաց նոյնպիսի գոչումներով, որպէս մտած էր այն տեղ։

Տեսնելով այդ խումբն ու իր կատարած դերը, միտքս պահ մի սլացաւ Հայաստան աշխարհը՝ երևակայելով նորա «փաշան ու բօշան», «ուէյսն ու զզիր,» ուրախաին խաղերը, որ մօտիկ անցեալի «անհոգ տարիներին՝ մեծահամբաւ ծնողներից յետոյ՝ կըկատարուէր նրա շատ մասերում։ Հայաստան աշխարհը՝... այո, որին այժմ վիճակուած է միայն «ծանել՝ անթաղ մնալու նախատինօք, լալ՝ միայն արիւն արտասուք... Բայց ինչ կըմտածեմ։ Դառն ու տխուր իրականութիւնն արդէն պարզ ու պայծառ պատկեր է նորա ներկայ արիւնոտ ու մթամած վիճակին...։

Հրճուանքն ու տօնախմբութիւնը, զանազան ներկայացումներն ու պատմը, երգեցողութիւնք ու նուագածութիւնները պարբերաբար կատարուեցան հիւանդանոցի ամեն մի մասում մինչև՝ ըստ Նոր-տօմարի, Յունվար 2-ը։

Եւ այդ յարկերի տակ, այդ ժամերին գոնէ, չեմ թերանայ ասելու, որ աշխարհը՝ իր ունայն ու անցաւոր յուզումով՝ կըպատկերէր իր էութեան համառօտութիւնը—մէկ տեղ ուրախական աղաղակներ, անհոգ գոչումներ, խրախճական տեսարաններ, երգ ու ծափահարութիւններն արդէն արձագանք կըգտնէին դաշնակի ու փողահարութեան ախորժելի մեղեդիների մէջ, միւս կողմ ծանր ու մահամերձ հիւանդների անկողինները շրջապատող բարեկամաց լացն ու կոծը, ինչպէս նաև հիւանդների առաջն ու տնքոցը, կարօտատար ալն ու թառաչը, որոնք եթէ մի փոքր չէ նէին խարօսիկ բաղդի դէմ, գոնէ օրհասական տագնապներ ու մաքառում նոր էին կեանքի անողոք պայմաններին ուղղած...։

Տօնի գիշերը, այն է Ծննդեան առաջին օրը, Sister Stephen-ը, որի պաշտպանութեան էինք յանձնուած, բոլոր հիւանդներին (ինչպէս նաև ծառայողներին) ուսուց Փրկչի Ծնունդը զանազան ընծաներով։—Ոմանց շապիկ ու օձիկ, ոլոց գլխարկ, փողպատիկ, մանկաց գուլպայ ու խաղալիկ և այլն և այլն... Իսկ ինձ ևս, որպէս միակ հային այդտեղ, նուիրեց անգլիացի յայտնի բանաստեղծ գրող W. U. Rossetti սատարակամ բանաստեղծական գործի— Longfellow—ողկրօզ և փառակազմ մի օրինակ, որի կողքին նշանագրելով նաև յարգանաց յիշատակարանը։ Իսկ տօնի ցերեկները մասնաւորապէս բոլոր հիւանդներին, ինք Sister-ը անձամբ բաժանեց պտուղ, միրգ և ծխախոտ՝ իր բոլոր պարագաներով։

Ի դէպ. նկատի ասենլով բժշկեա (D r Honnette) և գթութեան քրոջս (sister Stephen) առ ինձ ունեցած մասնաւոր խնամքն ու սէր, մանաւանդ նրանց բուռն հետաքրքրութիւնը դէպի մեր Ազգն, եկեղեցին ու գրականութիւնը, առաջնին՝ միրելի բժշկիս նուիրեցի ամերիկացի հայասէր բանաստեղծուհու (օրիորդ Ալիս Բլաքուէլ) հայկական բանաստեղծ-գրականութիւնից կազմած գրքի մի փառակազմ օրինակ, իսկ երկրորդին—գթութեան քրոջս—Աստուածատրեան Եսայի արքեպիսկոպոսի Անգլիերէնի թարգմանած մեր Ս. Պատարագի Խորհրդի թարգմանութեան մի փառակազմ օրինակ, որի մէկ երեսը անգլիրէն, է և միւսը՝ հայերէն։ Երկուսի հըրճուանքն ևս անսահման էր, երկուսն ևս՝ իրենց զգացած բերկրանքով՝ կարծես մանկացան։ Որովհետև առաջին անգամն էր, ինչպէս իրանք կըխօսային, որ կըտեսնէին մեր տառապած ազգի կրօնբարոյական և բանաստեղծ-գրականութեան երկու հատընտիր նմուշները, գըրուած իրանց ազգի լեզուով։ Մի ազգի, շընչքիկ կըսեմ, որ իր նահատակ վիճակով այժմ գրաւած է հասարակաց սեղանի վրայ, կ'օրօրուի անվերջ օրօրով, անփոյթ խնամով...

Իսկ դոցանից առաջ, պարտ է ասել, որ նոքա, ամեն այցելելուն և հանդիպելուն համարեա, (ինչպէս նաև միւս պատահողները) անկեղծ հետաքրքրութեամբ առեր, դիտեր և մեծ հաւանութեամբ վերցրեր են նաև իրանց շրջաններին ևս ցոյց տալու իմ սիրական «Արձագանքի» համարները, որ թէ ողջութեամբ և թէ ակարութեանս ժամանակ իմ անբաժան ընկերը և քաղցրը բայց տխուր Հայրենեաց հարազատ խաբրիկաբեր կռունկն է եղեր այս նժդեհ վայրերում...

Ծննդեան տօնից դեռ մի քանի շաբաթ առաջ էր, երբ նոցա տուի այդ բարեկամական նմուշները։ Այդ ժամանակ թաղը վերաբին ժպտացեր էր։ Եւ ես յոյս ունէի, որ շուտով պիտի կարողանամ թողնել և այդ հիւանդանոցը, ուր որպէս մի հայի և որպէս մի հայ խմբագրութեան կողմից այստեղ ուղարկածի, «Արձագանքի» թղթակցի՝ թէ աւելի խնամք և հոգածութիւն կըցածէին և թէ կըսիրէին և կըյարգէին անչափ, որչափին երբէք ես արժանի չէի զգայ ինքզինքս։ Սակայն անողոք և յարափոփոխ բաղդը երկու օրից յետոյ՝ կրկին շուռ բերաւ իր սև երեսը։ Հիւանդութիւնս երրորդ անգամով կրկընուեց, նոյն իսկ հիւանդանոցը դեռ չթողած, այն ևս աւելի սաստկութեամբ քան ինչ որ էր առաջ և տևեց ու անցաւ նաև Ծննդեան օրերն ևս, որոնց տօնախմբութեանը ինքնաբերաբար և յակամայից ներկայ գտնուեցայ հիւանդանոցի յարկին տակ։

Գիկալով այս տողերը շնորհակալութեանս զգացմունքն ինձ պարտադիր կ'անէ արձանագրել նաև այն հանգամանքը, որ իմ օտար բարեկամներս, անդի ունեցած հանդէսների միջոցին, առաջին անգամ ինձ կըյատակացնէին։ Եւ այդ կ'անէին անշուշտ ինչպէս առի մի հայի և ի պատիւ «Արձագանքի» խմբագրութեան, որ թէ մէկին և միւսին՝ մէկ խօսքով, պարտական է իմ կեանքը... Իսկ կատարուած հանդէսների ընդմիջումներին կամ յետոյ նոքա, բուռն ու գորովալի հետաքրքրութեամբ կըշրջապատէին ինձ և կըծածկէին զանազան տեղատարափ հարցերի տակ— Ո՞հ՝ դժբաղդ Հայերեքս վերաբերմամբ նորանոր լուրեր ու տեղեկութիւններ կ'ուզէր իմանալ։ Միւսը կըմխիթարէր անհուն յոյսով թէ արդէն հասեր է ձեր փրկութեան և փառաւորման ժամը. (բայց երբ, և վա՜յ այդ փրկութեան ու փառաւորման)։ Այլոց հանդէսների լաւն ու վատ տպաւորութիւնը կ'ուզէին իմանալ։ Կէսքն կըցանկային լսել թէ՝ մեր ևս—Հայաստան աշխարհը—ունի՞ կամ պահե՞ր է այս ու սորանման մեծափառ օրերի տօնելի յիշատակը, գիտէ՞ տօնել նրանց ըստ պատշաճի ուրախութեամբ ու բերկրանօք. կամ ընդհակառակը, եայլն եայլն. հարցեր, որոնց լուծումը, կըվստահիմ ըսել, կապուած է իւրաքանչիւր բան Հայաստանցու սրտի հետ։

Բաւ է, որ մասի մի ծայրով չօշափուէին ընաշխարհիկ քնարի մի թելը։ Ու ահա նրա ամբողջ յարկի հառաչը արձագանք կ'անէ հայրենի տարօրինակ անցեալի, տխուր ներկայի և անորոշ ապագայի բիւրաւոր երկդիմի յիշատակութիւններով, ուրախ ու տխուր յիշողութիւններով, նրա ամբողջ էութեան մէջ . . .

Նոյն օրը Նորին Վեհափառ Թագուհին Ծննդեան Տօնն աւետեց հեռագրով և ուղարկեց իր սովորական ընծան՝ «ճերմակ» կըտաւեղէն, հագուստներ և այլն։ Իսկ քաղաքի յայտնի անձնիներրից մասնաւորապէս լորդ Ռաշելտոն, մի քանի այլ լորդեր, պարլամենտի անդամներ, և վերջապէս բարձր պաշտօնական պատկանող անձինք ու տիկնայք այդ օրը իրենց «աւետումը» կատարեցին նոյնպէս զանազան ընծայաբերութիւններով ու այցելութիւններով։ Շատերը ևս նրանցից ներկայ եղան. տեղի ունեցած հանդէսներին ու ներկայացումներին և տօնախմբութեանն աւելի փայլ տալու համար մասնակցեցին նոցա։

Նոր-Տարին, գոնէ հիւանդանոցի յարկի տակ, չանցաւ այնքան շքեղ ու բերկրալի տօնախմբութեամբ, ինչ որ նա տեղի ունեցաւ Ծննդեան ալթիւ։

* * *

Типографія М. Мартиросянца. На Михайловской ул. № 54. Дозволено цензурою. Тифлисъ, 14-го Января 1897 года.

ի՛ բնչ չհորշ չունենալով, չեն յա-
ջողուիլ, մանաւանդ այն տեղերում,
ուր նրան արհեստներով պարապելու
են եղել բրնատնական արհեստաւոր-
ներ, որոնց հետ թիւրքը մրցել չկա-
րողանալով յուսահատ հրաժարուել
է իւր փորձից։ Իսկ այժմ երբ իւ-
րաքանչիւր թիւրք աւարտուելեամբ
է պարապուել, երբ դրանց ազգն ու
պետութիւնը հոգեկարքի մէջ է, ղե-
րանց արհեստագործութեան և նր-
պատակաչափար կօղպարոցականների
վրայ խօսիլը աւելի քան տարօրի-
նակ է թւում։

Մենք մի քանի անգիր, անօրէնք
կրօնական կարգադրութիւններ չենք
համարում Թիւրքիայում, կարող ենք
այսքանը միայն ասել, որ ամբողջ
մահմեդականութիւնը ամենաբնա-
միաքանութիւնում կազմուած մի սոս-
կալի հրէշային կօղպարոցում է ընդ-
դէմ քրիստոնեութեան։ Նրա համար
բոլոր քրիստոնեայ ազգերը գիտակցու-
(անհատաս) են, որոնց չնչել են ձգդ-
տում, մանաւանդ անասնական ատում
են «ճօսլաի դաւանութիւնը»։

«Պարիսի է ար, չարտեսակում է յօ-
գուտ ազգերը, կօղպարոցների այդ տգե
(վերևի նշանաբան)։ մէջ բոյն է գրել
թիւրքերի դէպի հայերն ունեցած յա-
տուկ առելութեան պատճառները միա-
նը, որին փոքրեցին կրօնական տեղուան-
գութեան նշանակութիւնն ապ։ Չատ
աւելի հշմարիտ է, որ այս զգացմաց
(առելութեան) մէջ տղերանդութիւնը
ամենաքիչ գերն է խաղում, և քէ
թիւրքն ընդհանրապէս չէ կարող թոյլ
տալ, որ ասոր երկրացի արհեստագործ-
ները կօղպարոցներից գուրս գոյութիւն
ունենան։ Իւրաքանչիւր արհեստաւոր
թիւրք հայն համարում է տանձդող
իւր հնարաւոր թշնամի և ամենայն
իւր հնարաւոր հրաւէրների և պատուեր-
ների համար մրցակից, քէև նա էլ, թիւրքի նման, ուժասպառ եղած
է վարչութեան և հարկերի ծանր ծնշման
ներքև, բայց այնուամենայնիւ նախան-
ձում է նրան, որ նա ազատ է մի քանի
մանաւոր բեռներից, գինուորական ծա-
ռայութիւնից. մահմեդական ասների
պարտաւորից գործադրութեից կայնու։

Կարծում ենք որ անհեթեթութ-
եան այսպիսի հերակիական սիւնա-
րին՝ Թիւրքիայի հնարքի մասին գէթ
մի փոքր գաղափար ունեցող մարդ
տակաւին չէ հասել, տակայն լսելիք
և այս.

«Այդ այս բոլոր խժդժութեանց և
արիւնահեղութեանց յանգների աւելի
շատ ընկնում է կառավարութեան այն
ահեմի վրայ, որ կամայականութեան և
բռնութիւնը բարձացնում է վերին էչ-
խանութեան սկզբունքի ասոիճանին, և
այդպիսով տնազանում է այլ և այլ
դասակարգերի ժողովուրդների նկրա-
կութիւնը։

Բայց չէ որ կառավարիչներն էլ այդ
ազգերից են, և Տաղար անգամ
փոխուած. գործադիր գրոնը և նրբ
լատարդն են եղել։

** Գրից Հէօլիը ցույց է տալիս,
թէ ինչպէս Տանտօւ Քրիստոսից
456 տարի առաջ սկսած, պաշտօնա-
պէս ասնում էին նւրաքանչիւր տա-
րի վերջը (fin de siècle)։

«...Իւրաքանչիւր հարիւրամեակ ու-
նէր իր առանձնը, որ փոխանակորդ
յանձնում էր իր յշանակութիւնը իւր
յաջորդին իւր դարը բոլորելուց յետոյ։

Այս մարդ պէսք է Տանկանալ հետե-
ւեալ բանաձեները Ասատուածի դար,
Որամազդի դար, Գրեհրդոն, Պղտամեն,
Ապշղոնի դար։ Գրեհրդոնն Տանկանա-
խանում է Օյոսոտս Օկաւիանոս կայ-
սեր ծննդին։ Ուշադրութեան արժանի
է, որ այդ Տանմեական դարը Տաշւում
էր 110 տարի փոխանակ 100 տարուան
և նրան ասնում էին երեք օր և երեք
գիշեր չորեական, Նախապէս վեց օր
առաջ պատրաստութիւն անելուց-
Յետի երեք օրը վերջանալուց յետոյ, մի
օր Տանգստանում էին։ Այնուհետև իրեն
վերջացուցութիւն այդ տասներդ, դարձեալ
մի չարաթ քէչ էին անում։ Չարավերջ-
ի տասները ընկնում էին մայիսի 26-ին,
27 ին և 28 ին և այդ առքին ամրողջ
քաղաքում տեղի էր ունենում մի ընդհա-
նուր մաքրութիւն։ Իւրաքանչիւր քաղա-
քացի պարտաւոր էր իր տնն ու տրե
կաները առած ներկայանալ քրմին, որ
տալիս էր նրանց ձեռքը յաներ, ծծումբ
և պատուիրում էր վառելով չորեցնել
այդ կօղերը իրանց ընտանեկան բոլոր
տեներեների, նրանց միջից տհմաքար
տարբերը Տալածելու համար։ Տեներ
երեք օրուան ընթացքում տեղի էին
ունենում նաև հրապարակական Տանդես-

ներ, քաստերական ներկայացումներ,
դիմահամադէմներ, պարահանդէսներ,
մրմնահարբեր, Տամերերք, կրկէսի խա-
ղեր, գազանամարտեր, ցլամարտեր,
ջահագնաց, կապեր։ Ասատուածներին չե-
ղածներ էին մասուցանում. Նրանց զո-
հում էին իՏնը ան ոչխար և նոյնքան այծ.
Նրանց սեղանների վրայ դնում էին ի-
րանց և իրանց քրմերի սիրած անուշե-
ղէնը, չիրան, փոխհատան, որ պատրաս-
տում էին մեղրից ու մանրած պանրից,
Հէքով տապակած ձիթապտ և մի ներ-
մակ երկնչ գոհում էին Թամբի վրայ
նատած Հերային, որի առջև չորում էին
110 սիրելաք, խորհրդական երկիսատու-
թեամբ։

*** Ֆրանչեսկո Նիտտին La Ri-
forma Sociale Տանդէսի մէջ ուսումն-
նասիրութեան և առել իտալական
գաղիականութեան նորագոյն շրջան-
ների։ Նա այն կարծիքն է յայտ-
նում. Թէ կարևոր է սերտ կապէ-
րով կապել գաղղիականներին
Մարդ-Հայրենիքի հետ և դրա հա-
մար յարմարագոյն միջոց է համա-
րում իտալիայ մեծ ընկերութիւնները,
որոց պիտի նպաստ տայ պետու-
թիւնը, որոց պիտի պաշտպանեն
հիւսպատոնները և որի նպատակը
պիտի լինի տարածել իտալական
լեզուն տարաշխարհում։

«Ճշմարիտ, ասում է նա, այն են, ինչ
որ նրանք գիտեն և կամենում են լինել
և եթէ նրանք Տնարաւորութիւն չտեղին
իրանց ուսած Տայրենի հողի վրայ ընդ-
լայնելու, նրանք այդ անում են Տայրենի
հողից դուրս. Կազարին *) պատմում է,
Թէ մի օր Միքսանենան մատուռի մէջ
(Զատիկ ասում) նա տնասատուածնե-
ղերը հօրաթօրդութիւն չտեղին իրանց
Միքէլ-Ընջելոյին տասնի զար-
գուած, մատան մի մուխ խորշում և-
ռանդով նկարելու, բայց լոյսը տանելով
իւր գլխի վերևը կախուած մի լապտե-
րից՝

—Այդ Նկարածդ, ասաց Նրան Վա-
զարին, ոչ ոք չէ կարող տեսնել։

—Ինչ հոգ, պատասխանեց Միքել-
Ընջելօն. Ատասած կամենում է, նրա
կամքը պիտի կատարուի։

Այդպէս էլ կարող են յատաջանալ ու
զօրանալ այն ազգերը, որոնք խորին
համաոք ունին դէպի իրանց ապագան
այն ազգերը, որոց մէջ մեծերն ու զօ-
րեղները համատասխանեամբ աչխատում
են յանձնան և խաղալ մէջ, ընդհա-
նուրի բարգաւթեան ու փառքի համար։

*) Georgio Vasari-ն Խաղաղ Նկարէ էր
Ֆլորենցիայում։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻԱ.— Ժամանակին մեր
հաղորդել էինք, Թէ Դրան և Կ.
Պօլսի խոհական դեսպանները
մէջ գժտութիւն է ծագել մի խոհա-
կան հարցանի ապօրինի պատը-
ման մասին։ Այս դէպքում Խոհական
ամենեին տրամագրական յարաբե-
րութիւններ չունեց Դրան հետ, այլ
ուղղակի ջրանի միջոցներով ստի-
պել կատարել իւր պահանջը. Ստ-
պել Թէ ինչ են հարցերում այդ մասին
Եւրոպական լրագրները.—Կ. Պօլսում
բնակուող իտալական հպատակ գ-
պատրած Մարինին իրր Թէ սուլթա-
նի հանգիստ վիրատրական խօսքեր
ասելուն պատճառաւ ձերբակալուեց
ռանձին կառավարութեան հրամանով.
և ուղարկուեց Տրապիզոն, որպէսզի
այնտեղից էլ պրօտուին Բաքուից
(Փոքր-Ասիայում)։ Կ. Պօլսոյ Խոհա-
կան դեսպանն այդ իմանալով, իս-
կոյն յայտնեց Դրան, որ եթէ ան-
միջապէս յետ չեն բերի իտալական
հպատակ Մարինին, նա Տրապիզոն
ի՛ուղարկի իւր պահանջատէրը, նոյ-
նին անմիջապէս հետևից զորջ և
իտալական «Երբեմնի» և «Ֆաիլէյ»
պահանջատէրը վտանգին իրանց
կամքատերը և պատրաստում էին
ուղղակուել Տրապիզոն։ Այդ Տանգա-
մանքը սարսափելի երկիրչ առաջ-
գրեց Կ. Պօլսում և Թուրք դիտմամբ
լուրեր էր տարածում, Թէ տեղական
մահմեդականները ցանկանում են կո-
տորել քրիստոնեաներին. սակայն
Դրան այդ խոյանամտութիւնը չյա-
ջողուեց, Իտալական դեսպանը չնի-
ջաւ, նաեւ Տրաւարեց ուղղուելով
Տրապիզոն։ Այն ժամանակ Դուրը
սարսափից և անմիջապէս Տրաման
արձակեց գոհացնել Իտալական դես-
պանի պահանջը և յետ կանչել Ը-
րապիզոնից պատրաստած Մարինիին։

ՊՂՈՎԱՍՏԱՆ.— Մեր ժամանա-
կակից երկու Նշանաւոր մահմեդա-
կան պետութիւններ՝ Տանհայտանին
ու Պարսկաստանը գտանվում են
քաղաքականական շրջանի մէջ. թայց
մինչդեռ առաջինը ստանում է բա-
րեհոգութիւններ սահմամբ, պա-
տարագուած, ամեն ջանք գնելով դի-
մադրելու Նրանց իրադրութեան և
մեծ բայում կամայ խոչընդոտներ
յարուցանելու. Նրանց դէմ, երկրորդը
ընդգրկուում է նրանց իւր բարձ-
րադոյն իշխանի՝ հրեաստարդ չահի
կամքին համաձայն, որ այժմ կատա-
վարում է իւր տէրութիւնը տատաներ-
կու պատասխանատու նախարարնե-
րի միջոցով. Մեծ մէզիրի պաշտօնը,
որ որքագործուած էր կրօնական ա-
տանդութիւնների և գործոց ա-
ռաջնորդութեամբ, ոչնչացրած է և Պարս-
կաստանի իշխանի միայն այդ բայն
արդէն ապացոյց է նրա անբնական
կարգի և մտածողութեան անկատար-
ության. Տատարակաց կարծիքը կամ
աւելի ճիշդ է ասել, ամբոխի տե-
սակէտը իրենը, ժողովրդի դրդըռ-
մամբ, այնպիսի այժ է ներկայացը-
նում, որի դէմ չատ անգամ պարս-
կական կառավարութիւնն ստիպուած
է եղել մարտնչելու, և տարիս մէկ
կամ երկու անգամ ներկայացնում
նոր ներաժոյր, որ ըստ ներկայա-
ցի ձևով է պատահում նոր բարեփոխութիւնները կը
Տանդիպին բնակիչների որոշ դասե-
րի կողմից բուռն դիմադրութեան,
բայց Գաղը, ինչպէս պարզապէս ե-
րևում է, անգիտակից չէ այդ դը-
ժուարութիւնների, որոնց պիտի
Տանդիպի իւր դիտաւորութիւնները
իրագործելու ժամանակ. Նա արդէն
յայտնել է, որ բարեփոխութեանց
գործն ոչնչան է զգայնութեան Նը-
րան, որ առ այժմ նա տրամադրված
է ներոպա անելիք նախագծերում
մեծ չափով նահանգապետութ-
իւնները, որ յատկապէս մինչեւ 1900
թուականը. «Times»-ի ասելով,
նոր բնաոյն պաշտօնեաների անձ
նատուութիւնները կարող են նրա-
կատար լինել Շահի անկեղծ ցան-
կութեան, որ պետութեան վարչու-
թեան մէջ հիմնական բարեփոխու-
թիւնները մտցնելու մասին։ Մուշիր-
դ-Դուվլէի, պատգիի գոյ ծոց նա-
խարար Միրզա-Մուրթին Խանը չատ
արդիներ գեղան էր Գ. Պօլսում,
որ նա լաւ Տամբաւ ստացաւ թէ
ռանձական և թէ ներսպական շըր-
ջանների մէջ. Նախկին Մուշիր-դ-
Դուվլէի պարսկական Տետագրների
կատարիչը, Նշանակած է նորին
գործոց նախարար, իսկ Կազրվ-դ-
Դուվլէին, Քիրմանի նահանգապետ-
նոր ամենանշանաւորը, Նշանա-
կուած է գինուորական նախարար։
Նոցին գործոց նախկին նիզամուլ-մուլք՝ Թէշրանի նախկին
նահանգապետը, տանանձնում է եր-
կամոյ նախարարի ծանր պաշտօնը։
Պարսկաստանի երկամոյը բաւական
քանկագուած վիճակի մէջ է. պարկն
այժմ խոստում են ժամանորապէս 5
միլիոն Թուման պահած մասին,
իսկ մինչև մայիս նոր արդիւնք չէ
սպասուում։

Խմբագիր-Տրատարակիչ
ԱՐՇԱԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԻՒՆԴԻՒՆՈՒՄ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Գուրիա, Գօրծոցումի արձանի Տանդէպ)
Հիւանդների ընդունելութեան ամեն
օր, բացի կիրակի օրերից.

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Ը. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ.
վիրաբուժական, վեներական (սիֆիլիս-
ի) և ներքին հիւանդութիւնների։

Կ. Մ. ՀԱԿՈՎԶԻՆՅԱՆ—9 -10 ժ. աչքի,
ներքին և ներսպական ն.

Կին-բժիշկ Ա. Ի. ՅՈՒՍՈՒՖՅԱՆ—ՐՈՒ-
ԲԻՆՅԱՆ—11—12 ժ. կանանց և երեխա-
յոց Տամար։

Զ. Ի. ԲԱԶԱՆՅԱՆՑ.—10—11 ժ.
կանանց ն. չորեքշաբթի, ուրբաթ և չա-
բաթ, իսկ 1½—2 ժ. երկուշաբթի, ե-
րեքշաբթի և հինգշաբթի։

Ի. Ֆ. ՊՈՏՍՈՒՆՅՈՑ—12—1 ժ. ա-
կանջի, կոկորդի, քթի և նրբի ն. ե-
րեքշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՂՈՍՅԱՆՑ—12—1 ժ. ներ-
քին, երեխայոց և նեարդային ն. երեք-
շաբթի, հինգշաբթի և չաբաթ։

Ա. Գ. ԱԶԱՐՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներ-
քին և երեխայոց ն.

ԴԵՐԵՎՆԱԲԺԻՇ

Ի. Ֆ. ՊՈՏՍՈՒՆՅՈՑ—5—6 ժ. երեք-
շաբթի, հինգշաբթի և չաբաթ։

Ա. Մ. ՓՈՂՈՍՅԱՆՑ—5—6 ժ. երկու-
շաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Ֆ. ԳՈՒՐՈՎ—6—7 ժ. սիֆիլիսի,
մկրկ և սեռական օրգանների, ներքին և
մաղթի ն.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քրիմ-խոշոցագործա-
կան հետազոտութիւն է անում մկրկ,
խիտ, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Տա-
մաձայնութիւն (կնսնաբուժի) և օպերա-
ցիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերահսկուն՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆՑ

ՎԻՐԲԱԲՈՒԹՒՆ ՀԻՒՆԴԻՒՆՈՑ

Մշտական մահճակալների բաժնով

ԴՕՔՏ. Ի. Մ. ՄԱՐԿՈՍՅՈՎԻ

(ՆԵՐՔԻՆ ԴԱՍԸՆԹ ԿՈՐՈՒՍՏՈՒՄ)

Մօլթոպ, Դանովկայա փողոց, № 3

Հիւանդների ընդունելութեան ամեն օր։

Ի. Մ. ՄԱՐԿՈՍՅՈՎ, ժամը 10—12
վեներական և սիֆիլիսի հիւանդութիւն-
ներին։

Ի. Ե. ՈՒՆԵՑԿՈՎ, ժամը 12—1, ծան-
կաբուժական և կանանց հիւանդութեան-
ների (երեքշ., հինգ.։ և կիւրակի օրերը)։

Տ. Ի. ՐԱԻՆՅՈՎ, ժամը 12½—2,
ներքին հիւանդութիւնների (երկուշաբ.,
չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Ե. Ֆ. ԹԵԼՈՎ, ժամը 12½—1½ ն.
Ղեկտի հիւանդութիւնների (երեքշաբ.,
չորեքշաբ. և ուրբաթ օրերը)։

Ն. Վ. ՊՈՐՏՈՒՅԻՆ, ժամը 1—2, վի-
րաբուժական և մկրկ հիւանդութիւնների,
մերսել (մասաժ) և սովորական ուրբաթ
(երեքշաբ., չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Ֆ. Ի. ՕՍՏՐՈՒՄՈՎ ժամը 12—1,
ներքին հիւանդութիւնների և ծաղկի
պատեստասումի (երեքշաբ., հինգշաբ. և
չաբաթ օրերը)։

Ս. Ա. ՁԱՒՏԱՉԵԱՆ, ժամը 1—3, վի-
րաբուժական և մկրկ հիւանդութիւնների,
(երեքշ., հինգշ. և կիւրակի օրերը)։

Ն. Տ. ՄՈՒՐԼԻՆ, ժամը 2—3, ակա-
նջի, կոկորդի և քթի հիւանդութիւնների
(երեքշ., հինգշաբ. և չաբաթ օրերը)։

Ե. Ե. ՖՕՆ-ԲՐԻՆՔԻՆ, ժամը 12—1, ա-
մառնաբուժութեան, նաև տատ մարդե-
յու, լչցների և արհեստական տատա-
նների դնելու։

Տ. Ի. ՐԱԻՆՅՈՎ, մանրադիտակով
քիմիական և բակտերիոդիտական հետա-
զոտութիւններ է կատարում—հետազո-
տութիւն մկրկ, խորխի և արեան։

Հիւանդների ցանկութեամբ համա-
ձայնութեամբ է լինում բուժարանում կան
բանտանոցներ՝ մարմնամարզական —
մասաժի և սովորական։

Խորհրդի համար վճարը, ինչպէս
նաև ծաղկի պատեստասման համար, 1
ռուբլի է։

Ներքինի համար գրի է. Համա-
ձայնութեամբ, անդամահատութեան
մասաժի, մշտական մահճակալի, կլեզ-
ապատնութեան, լոյսաձևի և ցնցուղի
համար առանձին համաձայնութեան պէտք
է կայացնել։

ԹԱՓԱՌԱՑԻ Ե. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Փոխադրուել է նոր բնակարան՝ Մի-
քայէլեան փողոց, բժիշկի Վերիմչանի
տան, № 101. Հիւանդներին ըն-
դունում է երեկոյեան 6½—7½ ժ.։

ԱՅԱՏԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է ՀՐԱՏԱՐԱԿՉԱՀ հայերէն
լեզուից, նոյնպէս լաւ իմանայ
ռուսերէնից թղթակցութիւն։
Դիմել «Ընդհանրապէս խմբագրա-
տուն։ (3—2)

Հայաստեաց Բարեգործական Ըն-
կերութեան ԹՈՒՔՈՒՐԵՐԵՆ ԴԱՍԸՆ-
ԹԱՑՔԸ բացուում է յունվարի վեր-
ջերում։ Ցանկացողները կարող են
գրուել Տիվիզոց, Դանովկի փողո-
ցում № 25։ (2—1)

Գաւառական մի քնային սրտնում է
դրարիր ներսնեական կամ մի այլ
հայոց միջնակարգ դպրոց աւարտած,
կամ միջնկի դասարանները գուրս ե-
կած և ռուսերէնի տմուտ հարց-
ներ վերձագանելու խմբագրատանը։

Bateaux a vapeur Français „N. PAQUET ET Cie“

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ.“

Կանոնաւոր և ուղղակի Նաւագնացութիւն կը կրնայ ՄԱՐՍԷԼԻԱ ԲԼՈՒՄ
չորեքշաբթի օրերը, երկու չաբաթը մի անգամ, սկիզբը յունվարի 22/10-ը
յոյներաբթիից, և

ԲԼՈՒՄԻՑ ԴԷՊ ՄԱՐՍԷԼ՝ ՏՐԻԵՍՏԸ ՈՒ Կ. ՊՕԼԻՍ ՎՐԱՅՈՎ

Մեկնում է Բաքուից չորեքշաբթի 22 յունվարի (3 փետրվարի) ՍԻՐԿՈՍՅԻՍ
չորեքշաբթի, Նաւագնաց է ՔՈՐԻԹԻ,
և այսպէս երկու չաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, երեկ. 4 ժամին

Բաճմաձեց—Փարիզ ուղղակի Տատորդակցութեան տոմսակներ, զինը սովորականից պակաս է լինում։

Ապրանքների և ճանապարհորդների մասին պէտք եղած տեղեկութիւններ
ստանալու համար դիմել բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին
Բաքուում.—Վրկուտր դ'Ոլնսկին, Նաթարեի փողոց.
Թիֆլիզում.—Գ. Օ. Ֆ. Բարնկենդանեանին, Սիօնի փողոց,
Նախիջևանում Սոմբոնեան բարվանատուն.
Բաթում.—Գ. Ս. Դիլդարեանին, Գալիբեանիի Տրապարակ,
Նովոռոսիյսկում.—պ. Մելչոյը Հերշինսկոյին.

ԹԻՓԼԻՋԻ ՔՐԻՄ-ԽՈՇՈՑԱԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐՁԱՒՐՈՒԹԻՒՆԸ

ի կիսամեայն տաքարեմեան յայտնում է, իբր որոշեան Տամաձայն 28 դեկտեմբերի 1896
մեայ, որ տասնաւոր է Թիֆլիզի պարսն Տանգամանքով առ 8 յունվարի
1897 ամի, նա ձեռնարկել է կարվելու

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՅՈՒՑԱԿ

Գալիքումն, Գեղարդի պէտք է կատարուին 1897—1901 բառամեակի
բաղաքային Խորհրդի իրատասուների ընտրութիւնները։ ընտրողների ժողո-
վում, որ նշանակուած է 1897 թ. փետրվար մայիսի 18 ին։

Ցիշեալ ցուցակի մէջ պէտք է մտցուին (Տամաձայն Գաղար. Կանոն.
24 յօդ.) Ա. այն մարդկանց անունները, որոնք ռուսահպատակ են, նոյն-
պէս և բարեկողոպան, գիտնական և ուսումնարանական հասատատութեան
նները և կառավարչական այն հասատատութիւնները, որոնք առ նուազն մի
տարով, Թիֆլիզի բաղաքի սահմանում, սեռական կամ ցմահ տի-
րելու իրաւունքով տրուած են այնպիսի անշարժ կալքի, որ նրանց բաղաքի վերդնուող գնահատական տուրքի և այդ տուրքի ան-
նելու համար եղած գնահատման մէջ տրուածին 1500 ռուբլի արժէք,
Բ. Այն ռուսահպատակ անձերը և պետութեան օրէնքների հիման վրայ
հատատատուած ընկերակցութիւնները, ընկերակցութիւնները ու միութիւնները,
որոնք Թիֆլիզի բաղաքի շրջանում ան նուազն մի տարի պատում են ինչ-
պէս անձինք, Նոյնպէս և հասատատութիւնները, այլ և այն առևտրա արդիւ-
նաբերական ձեռնարկութիւնները, որ առաջին կարգի կրկ-
պետական վճռագիրներ են վերցնում. Քաղաքային Վարչութիւնը այդ ամենի
վրայ պարտ է համաձայն նաև ապրանքների, որ ընդհանրների ցուցակ-
նրը. պատրաստ կրկնին, համաձայն իւր նոյն որոշման, առ 1-ն փետրվարի
1897 ամի. ուստի ով որ ուզում է իւր անունը մտնի յիշեալ ցուցակին-
րի մէջ, պարտաւոր է մինչև 1897 թուի յունվարի վերջը վճարել իրան
վրայ եղած բաղաքային առ 1-ն յունվարի 1896 ամի եղած տուրքը, որպէս
գի նրանց վրայ այդ տարեկան պարտքը կէս տարուայ գումարից աւելի
չլինի (Գաղար Կանոն. 33 յօդ. 8 կէտ.)։ (3—1)

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՒԳՈՒՍՏՈՎԻՉ ԱԲՐԱՀԱՄՈՎԱՆ

Հեղինակ Ձեռնարկի ատաղաական և գործարն. ՏաշուատպաՏութեան

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ Է ԵՒ ՊԱՏՐԻՈՏԱՅՈՒՀԻ Է

երկու սեռի անձանց, 4 ամսուայ ընթացքում, Տաշուապահութեան
գործնականապէս, կրաչխատելով, և եղած դէպքերում յանձն է
առնում պաշտօնի առաջարկել։

ԳՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ ԵՆ ՕՐԱՏԵՂԱՅՈՒՄ ԵՆ

ա) Կրկնակի խոսպան Տաշուապահութիւն քառ ամենայն ա-
ռևտրական ճեպերի, Տանգիքի Նաւթային արդիւնաբերական և վե-
րոյիչի գործագրական Տաշուհանութեան։

բ) Առևտրական թուաբանութիւն։

գ) Առևտրական Նամակագրութիւն։

դ) Գեղագրութիւն և ամենապատ ձեռքերի ուղղութիւն։

Պարապմունքները տևում են յունվարի 15-ից Տաշիչ յե-
ղած և պարբերաբար չարունակուում են իւրաքանչիւր 2 ՇԱՒՈՒ ամսից
յետոյ։

Ցանկացողները Ըոդ դիմեն գրատ կամ անձամբ 3 ժամից
մինչև 5 ժամ երեկոյեան, ՍՈՒՆՈՒՑԻ, Սադոչայա փողոց, տան
Մարքարովի, № 27։

Վերոյիչեալ Տաշուապահութեան ձեռնարկը Տաճախում է Թիֆլիզի
և Բաքուում եղած յայտնի գրանձառատնեցիների. Գինն է 3 ռուբ-
լի 50 կոպէկ։

Օտարազգացածների գիրքը գնելու համար կարող են դիմել ան-
գինաձին, առանց պօստայի ծախս վճարելու։ (15—12)

ԹԻՓԼԻՋԻ ՔՐԻՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԹՈՒՐՈՒՆԻՄ

Հինգշաբթի, 1897 թ. յունվարի 16-ին

Հայ դերասանական ընկերութիւնը

ԳՅՈՒՏԱՐ Պ. Ա. ՄԱՐԴԱՐԵԱՆ-ԱՐՏԱՀԱՑԵԱՆԻ

ԿԸՆԴՐԿԻ ՆՈՐ ՊԻՍ

Մանանկլուխմամբ 5 տարիկ. օր. Վ. ՄՆԱՅԱՑԵԱՆԻ

I

ԾԱՆՕԹ ԱՆԾԱՆՕԹՆԵՐ

Դրամ. 1 գոր. փակագր. ռուսաբերենից Ա. Սարգսյան-Ազիզառանի.

II

ԴԱՄԱԿԼԵԱՆ ՍՈՒՐ

Դրամա (էսքիզ) երկու գործ. Նոյ. Եմին Ջէլ-Ֆիլգազեանցի.

III

ՔԱՂԱՑՈՒՐ ՔԱՔԱՄՈՒ

Կատակ վոդ. 1 գործ. Հեղ. Խ. Շչեգլովին Փոխ. Ադամ Մարգարեան-Ազիզառանի.

Սկիզբն է 8 ժամին երեկոյեան.

ՏԵՂԵՐԻ ԳԻՆԸ ՍՈՎՈՐԱԿԱՆԻՆ Է

Ծանօթ.—Ցոմսակները վաճառվում են Թատրոնի կասսայում. Խմբագրական
տոմսակները իսկական են։ (2—2)

Дозволено цензурою, Тифлисъ 14-го Января 1897 года. Տպարան Մնացական Մարտիրոսեանցի. Типографія М. Мартиросянца. На Михайловской ул. № 81.